

Կ-428-20.12.2019,02.03.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2018 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածում՝

1) լրացնել նոր 2.1-րդ մաս.

«2.1. Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման դատավորների կողմից:».

2) 3-րդ մասից հանել «, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների» բառերը:

Հոդված 2. Օրենքի ամբողջ տեքստում «Կարգապահական հարցերի հանձնաժողով» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով» բառերով և դրանց հոլովաձևերով:

Հոդված 3. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասում «ընտրվելու,» բառից հետո լրացնել «նրա նկատմամբ սույն օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի 3.2.-րդ կետով սահմանված կարգապահական տույժի կիրառման,» բառերը:

Հոդված 4. Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունից հանել «, ինչպես նաև դրանք քննող դատավորների ցանկը» բառերը:

Հոդված 5. Օրենքի 45-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) 25 տոկոս՝ էթիկայի և կարգապահական հարցերի, ինչպես նաև դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովների անդամների համար.».

2) 1-ին մասի 5-րդ կետից հանել «Վճռաբեկ դատարանի և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների, ինչպես նաև » բառերը.

3) 1-ին մասում լրացնել նոր՝ 5.1-ին և 5.2-րդ կետեր.

«5.1) 50 տոկոս՝ Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների համար.

5.2) 60 տոկոս՝ Վճռաբեկ դատարանի նախագահի համար.».

4) 3-րդ մասում «Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին» բառերը փոխարինել «Սույն օրենսգրքի 21-րդ հոդվածի 2.1-րդ մասով նախատեսված» բառերով:

Հոդված 6. Օրենքի 51-րդ հոդվածի 6-րդ մասում «գլխավոր դատախազը» բառերից հետո լրացնել «կամ նրա հանձնարարությամբ՝ տեղակալը» բառերը:

Հոդված 7. Օրենքի 53-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «և համապատասխան դատավորին» բառերը փոխարինել «, իսկ առանց դատարանի թույլտվության իրականացվող քննչական գործողության մասին՝ նաև համապատասխան դատավորին:» բառերով.

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Քրեական հետապնդման մեջ չգտնվող դատավորի մասնակցությամբ քննչական գործողությունը կատարվում է նախապես դատավորի հետ համաձայնեցված ժամանակ և վայրում, բացառությամբ դատարանի թույլտվությամբ իրականացվող քննչական գործողության: Քննչական գործողությունը իրականացնելիս առավելագույնս ապահովվում է քննչական գործողության գաղտնիությունը,

դատավորի հեղինակության և անկախության նկատմամբ հարգանքը, բացառելով դատավորի գործունեությանը ուղղակի կամ անուղղակի որևէ միջամտություն:»:

Հոդված 8. Օրենքի 66-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր՝ 15-րդ և 16-րդ կետեր.

«15) ներկայացնել գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան և այդ օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ.

16) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացնել պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ, որոնք հաստատում են, որ իր գույքի փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը) ողջամտորեն հիմնավորվում է օրինական եկամուտներով, կամ իր մոտ առկա չէ չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրը օրինական է և արժանահավատ է:»:

Հոդված 10. Օրենքի 70-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում՝

ա. 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «պահպանել ներքին աշխատանքային կարգապահության կանոնները.».

բ. 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«14) զերծ մնալ այնպիսի գործողություններ ձեռնարկելուց, որոնք ողջամտության սահմաններում կարող են ստեղծել ինքնաբացարկի հիմքեր.».

2) լրացնել նոր 3-րդ մաս.

«3. Ի լրումն սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարքագծի կանոնների՝ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի պալատի նախագահը պարտավոր են լիարժեք և պատշաճ կատարել սույն օրենսգրքով համապատասխանաբար դատարանի նախագահի և Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի համար սահմանված լիազորությունները :»

Հոդված 11. Օրենքի 73-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասից հանել «, եթե ողջամտորեն կարող է ընկալվել, որ այն կապված է իր պաշտոնեական պարտականություններն իրականացնելու հետ» բառերը.
- 2) 5-րդ մասում «հարյուր հազար» բառերը փոխարինել «վաթսուն հազար» բառերով, իսկ «չորս հարյուր հազար» բառերը՝ «երկու հարյուր քառասուն հազար» բառերով:

Հոդված 12. Օրենքի 74-րդ հոդվածի 5-րդ մասում՝

- 1) առաջին պարբերությունում «ժողովն իրականացնում է հետևյալ գործառույթները» բառերը փոխարինել «ժողովը» բառով.
- 2) 2-րդ կետում «Կարգապահական, Ուսումնական հարցերի» բառերը փոխարինել «Էթիկայի և կարգապահական, Ուսումնական հարցերի, ինչպես նաև Դատավորների գործունեության գնահատման» բառերով:

Հոդված 13. Օրենքի 76-րդ հոդվածում՝

- 1) 4-րդ մասում «ղեկավարը» բառից հետո լրացնել «Ընդհանուր ժողովի նիստից առնվազն մեկ ամիս առաջ» բառերը.
- 2) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝
«6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ծանուցումը ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, թեկնածուն կարող է դիմում ներկայացնել Դատական դեպարտամենտի ղեկավարին՝ պահանջելով իր անունը չներառել քվեաթերթիկում:»:
- 3) լրացնել նոր՝ 6.1-6.3-րդ մասեր.
«6.1. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դիմումը չներկայացնելու դեպքում նույն մասով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում թեկնածուն Դատական դեպարտամենտի ղեկավարին է ներկայացնում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը (այսուհետ՝ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ):

6.2. Հարցաթերթիկը ստանալուց հետո՝ մեկօրյա ժամկետում, Դատական դեպարտամենտի ղեկավարը բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ 10-օրյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

6.3. Դատական դեպարտամենտի ղեկավարը թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի խորհրդատվական եզրակացությունը ստանալուց հետո այն տրամադրում է Ընդհանուր ժողովի անդամներին՝ Ընդհանուր ժողովի նիստից առնվազն երեք օր առաջ:»:

Հոդված 14. Օրենքի 77-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 77. Ընդհանուր ժողովի հանձնաժողովների ձևավորումը

1. Ընդհանուր ժողովը ձևավորում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողով և Ոսումնական հարցերի հանձնաժողով:

2. Հանձնաժողովներն իրականացնում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով իրենց վերապահված գործառույթները:

3. Դատարանների նախագահները, Վճռաբեկ դատարանի պալատների նախագահները և Բարձրագույն դատական խորհրդի անդամները չեն կարող լինել Ընդհանուր ժողովի՝ սույն օրենսգրքով նախատեսված հանձնաժողովների անդամներ: Նույն անձը միաժամանակ չի կարող լինել Ընդհանուր ժողովի երկու հանձնաժողովի անդամ:

4. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը կազմված է ութ անդամից, որոնցից վեցը՝ դատավոր անդամներ, իսկ երկուսը՝ դատավոր չհանդիսացող անդամներ: Դատավոր անդամներից երկուսը ընտրվում են մասնագիտացված դատարանների դատավորներից՝ յուրաքանչյուր մասնագիտացված դատարանից՝ մեկ դատավոր, երկուսը՝ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներից՝ համապատասխանաբար քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ, մեկը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, մեկը՝ Վճռաբեկ դատարանի դատավորներից:

5. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր անդամների թեկնածուները առաջադրվում են ինքնաառաջադրման կամ այլ դատավորի կողմից թեկնածուի համաձայնությամբ առաջադրվելու եղանակով:

6. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր անդամներին ընտրում է Ընդհանուր ժողովը՝ գաղտնի քվեարկությամբ՝ չորս տարի ժամկետով:

7. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամների թեկնածուները առաջադրվում են սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով:

8. Որպես Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի թեկնածու կարող է առաջադրվել այն իրավաբանը, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով, ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան կամ մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառություն, չի հանդիսանում որևէ կուսակցության անդամ և նրա նկատմամբ առկա չեն սույն օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված սահմանափակումները:

9. Սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված թեկնածուներին ներգրավելու նպատակով Դատական դեպարտամենտը Էթիկայի և կարգապահական հանձնաժողովի դատավոր անդամների ընտրությունից առնվազն երեսուն օր առաջ հայտարարում է մրցույթ, որի շրջանակներում մեկական թեկնածու կարող են առաջադրել Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված պահանջներին բավարարող հասարակական կազմակերպությունները: Թեկնածուների կենսագրությունները և նրանց ներկայացրած կազմակերպությունների վերաբերյալ տեղեկությունները հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական կայքում: Սույն մասով նախատեսված հասարակական կազմակերպություններին ներկայացվող պահանջները, մրցույթի անցկացման և հանձնաժողովի անդամների ընտրության կարգն ու մանրամասները սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:

10. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամներին ընտրում է Ընդհանուր ժողովը քվեարկությամբ

մասնակցող դատավորների ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, չորս տարի ժամկետով: Ընտրության ժամանակ հաշվի է առնվում թեկնածուի կրթությունը, նրա՝ սույն հոդվածով սահմանված պահանջներին և նրան ներկայացրած կազմակերպության՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված պահանջներին համապատասխանությունը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

11. Ուսումնական հարցերի հանձնաժողովը կազմված է յոթ անդամից, որոնցից հինգը՝ դատավոր անդամներ և երկուսը՝ դատավոր չհանդիսացող անդամներ: Դատավոր անդամներից մեկը ընտրվում է Վճռաբեկ դատարանի դատավորներից, երկուսը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, երկուսը՝ առաջին ատյանի դատարանների դատավորներից:

12. Ուսումնական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամ կարող է ընտրվել այն իրավաբանը, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով և ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան կամ մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառություն:

13. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը կազմված է հինգ անդամից, որոնցից երեքը՝ դատավոր անդամներ և երկուսը՝ իրավաբան գիտնականներ: Դատավոր անդամներից մեկը ընտրվում է Վճռաբեկ դատարանի դատավորներից, մեկը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, մեկը՝ առաջին ատյանի դատարաններից:

14. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել այն դատավորը, որն ունի դատավորի պաշտոնում առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ և գործունեությունը գնահատված լինելու դեպքում՝ գնահատման վերջին արդյունքներով՝ բարձր կամ լավ գնահատական:

15. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել այն իրավաբան գիտնականը, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով և ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառություն:

16. Դատավորների գործունեության գնահատման և ՌԽումնական հարցերի հանձնաժողովների անդամների թեկնածուները առաջադրվում են ինքնաառաջադրման կամ այլ դատավորի կողմից թեկնածուի համաձայնությամբ առաջադրվելու, իսկ դատավոր չհանդիսացող անդամները՝ նաև սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված պահանջներին բավարարող հասարակական կազմակերպությունների կողմից առաջադրվելու եղանակով:

17. Դատավորների գործունեության գնահատման և Ուսումնական հարցերի հանձնաժողովների անդամներին, Ընդհանուր ժողովի հաստատած գործունեության կարգին համապատասխան, ընտրում է Ընդհանուր ժողովը՝ գաղտնի քվեարկությամբ՝ չորս տարի ժամկետով:

18. Ընդհանուր ժողովի կողմից սույն հոդվածով նախատեսված հանձնաժողովների՝ դատավոր չհանդիսացող անդամների պաշտոնը թափուր մնալու օրվանից հետո մեկ ամսյա ժամկետում հանձնաժողովի անդամ չընտրելու դեպքում նրանց ընտրում է Բարձրագույն դատական խորհուրդը տասնօրյա ժամկետում:

19. Հանձնաժողովների՝ դատավոր չհանդիսացող անդամին վճարվում է հատուցում Կառավարության սահմանած կարգով և չափով:»:

Հոդված 15. Օրենքը լրացնել նոր 77.1-րդ հոդվածով.

«Հոդված 77.1 Ընդհանուր ժողովի հանձնաժողովների անդամի լիազորությունների դադարումը և դադարեցումը

1. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են՝

1) նրա լիազորությունների ժամկետը ավարտվելու դեպքում.

2) հրաժարական ներկայացնելու դեպքում.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող ճանաչվելու կամ մահացած հայտարարվելու դեպքում.

4) նրա նկատմամբ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ կայացվելու, կամ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցվելու դեպքում.

5) նրա մահվան դեպքում.

6) դատավոր անդամի պարագայում՝ որպես դատավոր լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու դեպքերում:

2. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

1) երկարատև անաշխատունակության կամ այլ հարգելի պատճառով մեկ տարվա ընթացքում հանձնաժողովի նիստերի առնվազն կեսից բացակայելու դեպքում.

2) մեկ տարվա ընթացքում հանձնաժողովի նիստերից անհարգելի պատճառով առնվազն երկու անգամ բացակայելու դեպքում.

3) առնվազն մեկ անգամ քվեարկությունից հրաժարվելու կամ ձեռնպահ մնալու դեպքում, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված քվեարկությանը մասնակցությունը բացառող դեպքերի.

4) օրենքով և Հանձնաժողովի աշխատակարգով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում:

3. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցնելու հարցը լուծելու համար Հանձնաժողովի նախագահի կողմից նիստ չհրավիրվելու դեպքում այն հրավիրվում է Հանձնաժողովի առնվազն երեք անդամի կողմից: Հանձնաժողովը կայացնում է որոշում Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցնելու մասին:

4. Հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարում են նրա՝ որպես Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարման կամ դադարեցման, ինչպես նաև նրա՝ Հանձնաժողովի նախագահի պաշտոնից հրաժարական ներկայացնելու դեպքում: Հանձնաժողովի նախագահի կողմից իր պարտականությունները չկատարելը հիմք է Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ նրա լիազորությունները դադարեցնելու համար:

5. Հանձնաժողովի անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում Հանձնաժողովի նախագահը յոթնօրյա ժամկետում դիմում է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ արտահերթ Ընդհանուր ժողով հրավիրելու և հանձնաժողովի նոր անդամի ընտրությունը կազմակերպելու համար: Արտահերթ Ընդհանուր ժողով պետք է

հրավիրվի Հանձնաժողովի նախագահի դիմումը ստանալու պահից՝ մեկամսյա ժամկետում:»:

Հոդված 16. Օրենքի 78-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «իր կազմից» բառերը փոխարինել «իր դատավոր անդամների կազմից» բառերով.

2) լրացնել նոր՝ 4-րդ մաս.

«4. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը՝

1) իրականացնում է դատավորների գործունեության գնահատումը,

2) սույն օրենսգրքի 142-րդ հոդվածով սահմանված՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտում կամ դատավորի վարքագծի կանոնների խախտում (այդ թվում՝ էական կարգապահական խախտում) հայտնաբերելու դեպքում դիմում է էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար,

3) իրականացնում է սույն օրենսգրքով իրեն վերապահված այլ գործառույթներ:»:

Հոդված 17. Օրենքի 81-րդ հոդվածի 4-րդ մասում լրացնել նոր նախադասություն.

«Բարձրագույն դատական խորհրդի՝ Ընդհանուր ժողովի կողմից ընտրվող դատավոր անդամի ընտրության համար Ընդհանուր ժողովի նիստը գումարվում է այն ժամկետում, որ ապահովվի Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածուների վերաբերյալ սույն օրենսգրքի 76-րդ հոդվածի 6.3-րդ մասով սահմանված ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի խորհրդատվական եզրակացության տրամադրումը Ընդհանուր ժողովի անդամներին:»:

Հոդված 18. Օրենքի 84-րդ հոդվածում՝

1) 9-րդ մասի «ընտրվում է» բառից հետո լրացնել «առանց վերընտրման իրավունքի՝ երկու տարի վեց ամիս ժամկետով, բայց ոչ ավելի քան» բառերը.

2) 10-րդ մասի «անդամի թափուր տեղը համալրվելուց» բառերը փոխարինել «նախագահի պաշտոնը թափուր մնալուց» բառերով:

Հոդված 19. Օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել նոր նախադասություն.

«Սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտման առնչությամբ Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցում և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհուրդ է դիմում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը»:

Հոդված 20. Օրենքի 86-րդ հոդվածում 1-ին մասի 3-րդ կետում «մտնելը» բառից հետո լրացնել «կամ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելը» բառերը.»:

Հոդված 21. Օրենքի 89-րդ հոդվածում 1-ին մասի 27-րդ կետում «սահմանում է» բառերից հետո լրացնել «դատավորների ներքին աշխատանքային կարգապահության կանոնները,» բառերը»:

Հոդված 22. Օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասում «երբ դրանք» բառերից հետո լրացնել «Բարձրագույն դատական խորհրդի անդամի կամ վարույթի մասնակցի միջնորդությամբ» բառերը, «որոշմամբ» բառից առաջ լրացնել «պատճառաբանված» բառը, իսկ «, կամ դատավորն այդպիսի միջնորդություն է ներկայացրել» բառերը հանել:

Հոդված 23. Օրենքի 94-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասում «ընդունվում են» բառերից հետո լրացնել «բաց քվեարկությամբ՝» բառերը.

2) 5-րդ մասում «գաղտնի քվեարկությամբ» բառերը փոխարինել «խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ» բառերով. .

3) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, իսկ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշումները՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Եթե քվեարկության արդյունքով որևէ որոշման օգտին բավարար քանակի ձայների բացակայության պատճառով Բարձրագույն դատական խորհուրդը որոշում չի ընդունում, ապա համապատասխան միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը համարվում է ընդունված, իսկ որոշումը կազմում և ստորագրում են Բարձրագույն դատական խորհրդի այն անդամները, որոնք քվեարկել են միջնորդությունը մերժելու օգտին:»:

Հոդված 24. Օրենքի 95-րդ հոդվածի 4-րդ մասից, 113-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետից, 116-րդ հոդվածի 4-6-րդ մասերից, 128-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «կամ պատգամավոր ընտրված լինելու» բառերը, իսկ «մայրության, երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման» բառերը փոխարինել «հղիության և ծննդաբերության, նորածնի որդեգրման կամ նորածնի խնամակալ նշանակվելու» բառերով:

Հոդված 25. Օրենքի 95-րդ հոդվածի 6-րդ մասից հանել վերջին նախադասությունը:

Հոդված 26. Օրենքի 97-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «28» թիվը փոխարինել «25» թվով.

2) 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) ունեն անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներից առնվազն մեկ՝ ստանդարտացված թեստային համակարգերով ստուգվող լեզվական գիտելիքների՝

Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակի իմացություն:».

3) 5-րդ կետում «հինգ» բառը փոխարինել «երեք» բառով:

Հոդված 27. Օրենքի 98-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 7-րդ կետում «փաստաթուղթ» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 3.1-րդ մասով նախատեսված դեպքի» բառերը.

2) 2-րդ մասը լրացնել նոր՝ 13.1-րդ կետով.

«13.1) բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ.».

3) լրացնել նոր 3.1-րդ մասով.

«3.1. Եթե հավակնորդը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հայտ ներկայացնելու պահին ունի միայն ուսերեն լեզվի ստանդարտացված թեստային համակարգերով ստուգվող լեզվական գիտելիքի իմացություն, ապա պարտավորվում է մինչև Արդարադատության ակադեմիայում ուսուցման ավարտը ներկայացնել 97-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված այլ լեզվի իմացության վերաբերյալ համապատասխան ապացույցը, հակառակ դեպքում նա չի ներառվում դատավորների թեկնածուների ցուցակում:»:

Հոդված 28. Օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասում «լիարժեքությունն» բառից առաջ լրացնել «, բացառությամբ բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկի, » բառերը:

Հոդված 29. Օրենքի 104-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում «առաջարկում է» բառերից հետո լրացնել «գործունեությունը գնահատված լինելու դեպքում գնահատման վերջին արդյունքներով՝ բարձր կամ լավ գնահատական ստացած» բառերը.

2) 6-րդ մասում լրացնել նոր նախադասություն.

«Գնահատման հանձնաժողովի անդամների անունները ենթակա չեն հրապարակման մինչև քննության արդյունքների հրապարակումը:»:

Հոդված 30. Օրենքի 105-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Հավակնորդների գրավոր քննության աշխատանքները գնահատման հանձնաժողովին տրամադրվում են անանուն՝ ծածկագրված (ապանձնավորված) վիճակում: Գնահատման հանձնաժողովի անդամները պետք է ապահովված լինեն գնահատման չափորոշիչներին համապատասխան միավորների սանդղակով և ուղենիշային տիպային պատասխաններով: Գնահատման հանձնաժողովի անդամները չպետք է գնահատման ընթացքում միմյանց հետ քննարկեն գրավոր քննության աշխատանքին տրվող գնահատականները և դրանց հիմնավորումները: Հանձնաժողովի անդամները գրավոր քննության աշխատանքները գնահատելիս հաշվի են առնում Բարձրագույն դատական խորհրդի սահմանած գնահատման չափորոշիչները:»:

Հոդված 31. Օրենքը լրացնել նոր՝ 105.1-ին հոդվածով.

«Հոդված 105.1. Գրավոր քննության արդյունքների բողոքարկումը

1. Գրավոր քննության արդյունքները կարող են բողոքարկվել բողոքարկման հանձնաժողով՝ դրանք հրապարակելուց հետո տասնհինգօրյա ժամկետում:

2. Համապատասխան մասնագիտացմամբ բողոքարկման հանձնաժողովը կազմավորվում է տվյալ մասնագիտացմամբ քննության արդյունքների դեմ առաջին բողոքը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում՝ երկու դատավորի և մեկ իրավաբան գիտնականի կազմով, որոնք վիճակահանությամբ ընտրվում են Ուսումնական հարցերի հանձնաժողովի կողմից առաջարկված տվյալ մասնագիտացման 5 և Լիազոր մարմնի կողմից առաջարկված իրավունքի համապատասխան բնագավառի առնվազն 3 իրավաբան գիտնականի թեկնածուների կազմից՝ նրանց համաձայնությամբ: Գնահատման հանձնաժողովի անդամները չեն կարող ընդգրկվել բողոքարկման հանձնաժողովի կազմում:

3. Բողոքարկման հանձնաժողովի կազմում ընդգրկվելու, հանձնաժողովի աշխատանքն իրականացնելու կարգի, հանձնաժողովի անդամների վարձատրության, նրանց լիազորությունների դադարեցման, ինչպես նաև հանձնաժողովի գործունեության դադարման նկատմամբ կիրառվում են սույն

օրենսգրքի 104-րդ հոդվածով, իսկ բողոքարկման արդյունքների վերանայման նկատմամբ 105-րդ հոդվածով սահմանված դրույթները:

4. Բողոքարկման հանձնաժողովը բողոքը քննում և դրա վերաբերյալ կայացնում է որոշում բողոքարկման համար սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում: Բողոքարկման հանձնաժողովը կարող է քննության արդյունքների դեմ բերված բողոքը մերժել կամ բավարարել՝ մասնակի կամ ամբողջությամբ:

5. Գրավոր քննության արդյունքները դատական կարգով կարող են բողոքարկվել ընթացակարգային խախտումների հիմքով, եթե դրանք բողոքարկվել են բողոքարկման հանձնաժողովին:»:

Հոդված 32. Օրենքի 106-րդ հոդվածի 1-ին մասում «ույ» բառը փոխարինել «տասը» բառով:

Հոդված 33. Օրենքի 107-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «գրավոր քննության արդյունքները հրապարակելուց հետո» բառերը փոխարինել «Բողոքարկման արդյունքները հրապարակելուց, իսկ բողոքներ չլինելու դեպքում՝ բողոքարկման ժամկետը լրանալուց հետո» բառերով.

2) լրացնել նոր 1.1-րդ մասով.

«1.1. Դատական դեպարտամենտը միասնական համալրված ցուցակը Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնելու հետ միաժամանակ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում միասնական համալրված ցուցակում ներառված հավակնորդների բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկները՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:».

3) 8-րդ մասում «միավորները» բառից հետո լրացնել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը» բառերը:

Հոդված 34. Օրենքի 108-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «ինքնատիրապետում, » բառից հետո լրացնել «բարեվարքություն, » բառը:

1) լրացնել նոր 1.1.-ին մաս.

«1.1. Հարցազրույցից առաջ՝ հինգ օրվա ընթացքում, հավակնորդներն անցնում են հոգեբանական թեստավորում: Հոգեբանական թեստը կազմվում է սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված հատկանիշները գնահատելու նպատակով, և դրա արդյունքը ստացվում է ըստ նախապես մշակված էլեկտրոնային համակարգի: Բարձրագույն դատական խորհուրդը հաստատում է հոգեբանական թեստավորման չափանիշները և անցկացման կարգը, որի հիման վրա թեստավորման անցկացման համար անհրաժեշտ պայմաններն ապահովում է Լիազոր մարմինը: Թեստի արդյունքներն ունեն խորհրդատվական նշանակություն, տրամադրվում են հավակնորդին և Բարձրագույն դատական խորհրդին:»:

2) 2-րդ մասի 1-ին կետում «անձնական գործի» բառերից հետո լրացնել «, ներառյալ՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած խորհրդատվական եզրակացության» բառերով

3) 4) լրացնել նոր 8-րդ մաս.

«8. Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքները, հոգեբանական թեստի արդյունքները և հավակնորդի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:»:

Հոդված 35. Օրենքի 109-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «գաղտնի» բառը փոխարինել «բաց քվեարկություն՝ խորհրդակցական սենյակում» բառերով:

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

3) 3-րդ մասից հանել վերջին նախադասությունը.

4) 7-րդ մասից հանել վերջին նախադասությունը:

Հոդված 36. Օրենքի 111-րդ հոդվածի 6-րդ մասում, 113-րդ հոդվածի 5-րդ մասում, 117-րդ հոդվածի 4-րդ մասում, 119-րդ հոդվածի 2-րդ մասում, 120-րդ հոդվածի 3-րդ մասում, 124-րդ հոդվածի 3-րդ մասում «գաղտնի» բառը փոխարինել «խորհրդակցական սենյակում՝բաց » բառերով:

Հոդված 37. Օրենքի 121-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասից հանել «տվյալ դատարանում» բառերը.
- 2) 2-րդ մասում «Տվյալ դատարանում դատավորի» բառերը փոխարինել «Դատավորի» բառով և հանել «տվյալ դատարանում» բառերը.
- 3) 5-րդ մասում «գաղտնի» բառը փոխարինել «բաց» բառով և հանել 2-րդ նախադասությունը:

Հոդված 38. Օրենքի 123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետում «վերջին 10 տարիների ընթացքում առնվազն ութ» բառերը փոխարինել «վերջին ութ տարիների ընթացքում առնվազն վեց» բառերով:

Հոդված 39. Օրենքի 124-րդ հոդվածում՝

- 1) ուժը կորցրած ճանաչել 4-րդ մասը.
- 2) 5-րդ և 8-րդ մասերից հանել վերջին նախադասությունները:

Հոդված 40. Օրենքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3) իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող և վերջին 10 տարիների ընթացքում առնվազն 8 տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում իրավունք դասավանդած կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարած անձը:»:

Հոդված 41. Օրենքի 133-րդ հոդվածում՝

- 1) 3-րդ մասում «գաղտնի» բառը փոխարինել «բաց» բառով.
- 2) ուժը կորցրած ճանաչել 4-րդ մասը.

3) 5-րդ և 8-րդ մասերից հանել վերջին նախադասությունները:

Հոդված 42. Օրենքի 134-րդ հոդվածում՝

- 1) 5-րդ մասում «գաղտնի» բառը փոխարինել «բաց» բառով.
- 2) 6-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.
- 3) 7-րդ մասից հանել վերջին նախադասությունը:

Հոդված 43. Օրենքի 135-րդ հոդվածում՝

- 1) 5-րդ մասում «գաղտնի» բառը փոխարինել «բաց» բառով.
- 2) 6-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.
- 3) 7-րդ մասից հանել վերջին նախադասությունը:

Հոդված 44. Օրենքի 18-րդ գլուխը շարադրել նոր խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 18

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հոդված 136. **Դատավորների գործունեության գնահատման նպատակը**

1. Դատավորի գործունեությունը ենթակա է գնահատման:
2. Դատավորների գործունեության գնահատման նպատակն է՝
 - 1) առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները կազմելիս նպաստել լավագույն թեկնածուների ընտրությանը.
 - 2) նպաստել դատավորների վերապատրաստման ուղղությունների ընտրությանը.
 - 3) բացահայտել դատավորի աշխատանքի արդյունավետությունը բարելավելու ուղիները.
 - 4) նպաստել դատավորի ինքնակատարելագործմանը.
 - 5) նպաստել դատարանի գործունեության արդյունավետության բարելավմանը:
3. Դատավորի գործունեության գնահատման արդյունքները տրամադրվում են՝

- 1) Ուսումնական հարցերի հանձնաժողովին՝ դատավորների վերապատրաստման ուղղություններն ընտրելու.
 - 2) գնահատվող դատավորին՝ իր աշխատանքի արդյունավետությունը բարելավելու և ինքնակատարելագործվելու.
 - 3) սույն գլխով նախատեսված դեպքում էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար.
 - 4) դատարանի նախագահին՝ դատարանի գործունեության արդյունավետությունը բարելավելու նպատակով:
4. Բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի, դատավորների գործունեության գնահատման արդյունքները և այդ կապակցությամբ ձեռք բերված տվյալներն ու տեղեկությունները գաղտնի են:

Հոդված 137. Դատավորի գործունեության գնահատման տեսակները

1. Դատավորի գործունեությունը ենթակա է հերթական գնահատման՝ յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ, իսկ դատավորի նախաձեռնությամբ կամ սույն օրենսգրքով սահմանված դեպքերում՝ արտահերթ:
2. Դատավորի նախաձեռնությամբ արտահերթ գնահատում չի իրականացվում, եթե դատավորի գործունեությունը վերջին երկու տարվա ընթացքում գնահատվել է:
3. Դատավորի գործունեության գնահատումն իրականացվում է Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով և ժամկետներում:

Հոդված 138. Դատավորների գործունեության գնահատման չափանիշները

1. Դատավորների գործունեությունը գնահատվում է դատավորի աշխատանքի որակն ու արդյունավետությունը, ինչպես նաև դատավորի արհեստավարժությունն ու վարքագիծը բնութագրող՝ սույն հոդվածով սահմանված կիրառելի չափանիշների հիման վրա:

2. Դատավորի աշխատանքի որակի և արհեստավարժության գնահատման չափանիշներն են՝

1) դատական ակտը հիմնավորելու կարողությունը.

2) դատական նիստը կառավարելու և օրենքով սահմանված կարգով անցկացնելու կարողությունը:

3. Դատավորի աշխատանքի արդյունավետության գնահատման չափանիշներ են՝

1) աշխատանքային ծանրաբեռնվածության արդյունավետ կառավարման ունակությունը և աշխատանքի պլանավորումը.

2) ողջամիտ ժամկետում գործեր քննելն ու դատական ակտեր կայացնելը.

3) դատավորի կողմից առանձին դատավարական գործողությունների կատարման համար օրենքով սահմանված ժամկետների պահպանումը.

4) արդյունավետ աշխատամիջավայր ապահովելու կարողությունը:

4. Դատավորի էթիկայի և վարքագծի կանոնի գնահատման չափանիշներն են՝

1) վարքագծի և էթիկայի կանոնների պահպանումը.

2) դատարանի հանրային ընկալմանն ու դատարանի նկատմամբ վստահությանը նպաստելը, այլ դատավորների և դատարանի աշխատակազմի նկատմամբ դրսևորած վերաբերմունքը:

5. Սույն հոդվածով սահմանված գնահատման չափանիշներով գնահատման համար հանձնաժողովը պետք է հաշվի առնի դատավորի քննած գործերի առնվազն 10 դատական նիստի ճայնային արձանագրություններ (բացակայության դեպքում՝ պարզ թղթային արձանագրություններ) և առնվազն 10 գործն ըստ էության լուծող դատական ակտեր (պատահական ընտրությամբ):

Հոդված 139. Դատավորների գործունեության գնահատման կարգը

1. Դատավորների գործունեության գնահատումն իրականացնում է Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը՝ սույն օրենսգրքով սահմանված չափանիշների հիման վրա:

2. Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է դատավորների գործունեության գնահատման մեթոդաբանությունը՝ ներառյալ սույն օրենսգրքի 138-

րդ հողվածով սահմանված չափանիշների գնահատման ցուցիչները, գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը և դատավորների գործունեության գնահատման համար անհրաժեշտ այլ մանրամասները:

3. Դատավորների գործունեության գնահատման մեթոդաբանությունը սահմանելիս դատավորի գործունեության գնահատման համար առաջնահերթություն է տրվում սույն օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված չափանիշներին, որոնք դատավորին տրվող գնահատականի ձևավորման համար ունեն որոշիչ նշանակություն:

4. Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է դատավորների գործունեությունը գնահատելու հերթական ժամանակացույցը՝ ըստ համապատասխան տարիների և դատավորների:

Հոդված 140. Դատավորների գործունեության գնահատման արդյունքների ամփոփումը

1. Գնահատման արդյունքների վերաբերյալ կազմվում է որոշման նախագիծ, որը ներառում է գնահատման արդյունքի ամփոփագիր:

2. Գնահատման արդյունքների վերաբերյալ որոշման նախագիծն ուղարկվում է դատավորին, որն իրավունք ունի այն ստանալու պահից յոթնօրյա ժամկետում ներկայացնելու նախագծի վերաբերյալ իր նկատառումները:

3. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովն ուսումնասիրում է գնահատման արդյունքների վերաբերյալ դատավորի նկատառումները և որոշում կայացնում գնահատման արդյունքների վերաբերյալ:

4. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը գնահատման ընդհանուր արդյունքների հիման վրա դատավորների գործունեությունը գնահատում է բարձր, լավ, միջին կամ ցածր՝ հիմք ընդունելով Բարձագույն դատական խորհրդի կողմից սահմանված գնահատման սանդղակները, որոնք, ի թիվս այլնի, ներառում են յուրաքանչյուր չափանիշով դատավորի գործունեության գնահատման ցուցիչները, յուրաքանչյուր ցուցիչով միավորը որոշելու մեթոդը, միավորների առավելագույն չափը, ինչպես նաև տվյալ ցուցիչով դատավորի գործունեության գնահատման հիմք

հանդիսացող փաստաթղթավորված տվյալների շրջանակը և դրանք հավաքելու կարգը:

5. Դատավորի գործունեության գնահատականը ձևավորվում է գնահատման բոլոր չափանիշներով հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից դատավորին նշանակված գնահատականների միջինով:

6. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի դատավոր անդամը չի մասնակցում իր գործունեության գնահատմանը և արդյունքների ամփոփմանը:

Հոդված 140.1. Դատավորների գործունեության գնահատման հետևանքները

1. Գնահատման ընդհանուր արդյունքներով դատավորի գործունեությունը ցածր կամ միջին գնահատվելու դեպքում Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը որոշում է կայացնում դատավորին լրացուցիչ վերապատրաստման ուղարկելու մասին՝ սահմանելով այն չափանիշները, որոնցով նրա հմտությունները կատարելագործվելու անհրաժեշտություն ունեն:

2. Գնահատման ընդհանուր արդյունքներով ցածր կամ միջին գնահատված դատավորի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված լրացուցիչ վերապատրաստումն անցնելուց հետո եռամսյա ժամկետում կազմակերպվում է արտահերթ գնահատում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արտահերթ գնահատման դեպքում սույն օրենսգրքի 138-րդ հոդվածով սահմանված չափանիշների գնահատումն իրականացվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված կարգով:

4. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի կողմից դատավորի գործունեության գնահատման արդյունքում սույն օրենսգրքի 142-րդ հոդվածով նախատեսված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առերևույթ հիմքեր հայտնաբերելու դեպքում հանձնաժողովը դիմում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար:»:

Հոդված 45. Օրենքի 142-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա) 1-ին կետից հանել «ակնհայտ և կոպիտ» բառերը, իսկ «խախտումը» բառից հետո լրացնել «, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ.» բառերը.

բ) 2-րդ կետում «կանոնները» բառից հետո հանել «կոպիտ» բառը.

գ) 3-րդ և 4-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Արարքը չի համարվում կարգապահական խախտում, եթե այն, թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով կասկածի տակ չի դնում տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությամբ չի կարող հեղինակագրվել դատական իշխանությունը:»:

3) 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.

4) 5-րդ մասում «իրադրությունում» բառից հետո լրացնել «ակնհայտորեն» բառը.

5) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Հական կարգապահական խախտում է՝

1) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը, որը հանգեցրել է Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և (կամ) ազատությունների հիմնարար խախտման կամ հեղինակագրվում է դատական իշխանությունը.

2) սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված խախտումը, որը դրսևորվել է 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ, 8-9-րդ, 11-12-րդ, 15-16-րդ կետերով և 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ, 7-8-րդ, 13-14-րդ կետերով նախատեսված դատավորի պարտականությունների խախտմամբ, և պայմանավորված կատարման հանգամանքներով և (կամ) առաջացրած հետևանքներով՝ համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ.

3) երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող դատավորի կողմից կարգապահական խախտում կատարելը:»:

Հոդված 46. Օրենքի 144-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Հոդված 144. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ հարուցելու ժամկետները

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտման հիմքով՝ խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում: Սույն կետով նախատեսված հիմքով կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է ութ տարի, բացառությամբ սույն օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված առիթով հարուցվող կարգապահական վարույթի.

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելու հիմքով՝ խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելուց մեկ տարի հետո՝ բացառությամբ սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտումների.

3) դատավորի կողմից սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելու հիմքով՝ խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելուց երեք տարի հետո:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը հայտնաբերվել է մինչև տվյալ գործով եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, ապա նույն կետով նախատեսված մեկ տարվա ժամկետը հաշվարկվում

է տվյալ ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից, իսկ եթե դատավորի կողմից թույլ են տրվել դատավարական նորմերի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցնում են դատական պաշտպանության իրավունքի խախտման և արդարադատության խաթարման, ապա վարույթ կարող է հարուցվել նաև մինչև տվյալ եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:»:

Հոդված 47. Օրենքի 145-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել նոր՝ 3-րդ կետ.

«3) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն հոդվածի 1.1.-ին կետով նախատեսված դեպքերում:»:

2) լրացնել նոր՝ 1.1.-ին մաս.

«1.1. Սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտման առնչությամբ կարգապահական վարույթ կարող է հարուցել միայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ:»:

3) 2-րդ մասը «ժամկետում» բառից հետո լրացնել «սույն օրենսգրքի 147-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով» բառերով:

Հոդված 48. Օրենքի 146-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել նոր՝ 4-րդ կետ.

«4) վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը:»:

2) 4 -րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Վարույթ հարուցող մարմինը կատարված ուսումնասիրությունների արդյունքում կայացնում է կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշում կամ չի հարուցում կարգապահական վարույթ

3) 6-րդ մասում՝

ա. 1-ին կետում «հարուցված» բառից հետո լրացնել «կարգապահական» բառը.

բ. լրացնել նոր՝ 4-րդ կետ.

«4) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են:»:

Հոդված 49. Օրենքի 147-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «վեց շաբաթից» բառերը փոխարինել «երկու ամսից» բառերով.

2) 3-րդ մասի 4-րդ կետում «անձին» բառից հետո լրացնել «, ֆիզիկական և իրավաբանական անձանց» բառերը, «տեղեկությունների վերաբերյալ» բառերը փոխարինել «տեղեկություններ և» բառերով.

3) 6-րդ մասը լրացնել նոր՝ 6-րդ կետով.

«6) առկա է սույն օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմք:».

4) 9-րդ մասի երկրորդ նախադասությունը «դրոշմագրով» բառից հետո լրացնել «կամ դրա անհնարինության դեպքում՝ հասցեատիրոջ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելով, որի դեպքում համարվում են հասցեատիրոջ կողմից ստացված նրա պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվելու պահից» բառերով:

Հոդված 50. Օրենքի 149-րդ հոդվածում

1) 1-ին մասում լրացնել նոր՝ 3.1-ին և 3.2.-րդ կետեր.

«3.1) առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի հերթական և արտահերթ համալրման ժամանակ ցուցակում ընդգրկվելու արգելք՝ մեկ տարի ժամկետով.

3.2) դատարանի նախագահի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնից ազատում:».

2) լրացնել նոր 1.1-րդ մաս.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 3.2-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը չի կարող կիրառվել սույն օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս:»:

3) 2-րդ մասում «հետևանքները,» բառից հետո լրացնել «դիտավորությունը կամ կոպիտ անփութությունը,» բառերը.

4) 3-րդ մասում «Եթե» բառից հետո լրացնել «առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի հերթական համալրման ժամանակ ցուցակում ընդգրկվելու արգելք կիրառելու կամ, դատարանի նախագահի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնից ազատվելու կամ,» բառերը:

Հոդված 51. Օրենքի 150-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «մեկամսյա» բառը փոխարինել «եռամսյա» բառով.

2) 2-րդ մասում «մեկ ամսով» բառերը փոխարինել «երեք ամսով» բառերով.

3) լրացնել նոր՝ 3-րդ և 4-րդ մասեր.

«3. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը կասեցվում է, եթե նույն փաստերի առթիվ հարուցվել է քրեական գործ և վերսկսվում է քրեական վարույթի ավարտից հետո:

4. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը Բարձրագույն դատական խորհրդի կողմից կարճվում է, եթե կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը վերսկսելուց հետո առկա են սույն օրենսգրքի 160-րդ հոդվածով նախատեսված դատավորի լիազորությունների դադարման հիմքեր: Քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննելիս պարտադիր է Բարձրագույն դատական խորհրդի համար միայն այն փաստերով, որոնցով հաստատված են որոշակի գործողությունների կատարումը և դրանք կատարած անձինք:»:

Հոդված 52. Օրենքի 151-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Հողված 151. Բարձրագույն դատական խորհրդում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացքը

1. Բարձրագույն դատական խորհրդում հարցի քննությունն սկսվում է հարցի էության և կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդության վերաբերյալ վարույթ հարուցած անձի զեկուցմամբ: Եթե դատավորի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցել է Լիազոր մարմինը, ապա վերջինս կամ նրա հանձնարարությամբ՝ տեղակալը պարտավոր է ներկա լինել Բարձրագույն դատական խորհրդի նիստին: Եթե կարգապահական վարույթը հարուցվել է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից, ապա Բարձրագույն դատական խորհրդի նիստին կարգապահական խախտման մասին միջնորդությունը զեկուցում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ հանձնաժողովի անդամներից մեկը: Եթե կարգապահական վարույթը հարուցվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից, ապա Բարձրագույն դատական խորհրդի նիստին կարգապահական խախտման մասին միջնորդությունը զեկուցում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ հանձնաժողովի անդամներից մեկը:

2. Այն դեպքում, երբ կարգապահական վարույթի նյութերը Բարձրագույն դատական խորհուրդ ուղարկելուց հետո վարույթ հարուցած մարմնին հայտնի են դարձել հանգամանքներ, որոնք բարելավում են դատավորի վիճակը կամ բացառում նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելը, վարույթ հարուցած մարմինը պարտավոր է այդ մասին հայտնել Բարձրագույն դատական խորհրդին:

3. Վարույթ հարուցած մարմնի զեկուցումից հետո Բարձրագույն դատական խորհուրդը լսում է այն դատավորին, որի նկատմամբ վարույթ է հարուցվել կամ նրա փաստաբանին: Բարձրագույն դատական խորհրդի անդամները և վարույթը հարուցած մարմնի ներկայացուցիչը կարող են հարցեր ուղղել դատավորին, որոնց վերջինս կարող է պատասխանել կամ հրաժարվել դրանց պատասխանելուց: Դատավորին կամ նրա փաստաբանին լսելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդը անցնում է վարույթի նյութերի հետազոտմանը:

4. Հարցի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի՝

1) դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ դատավորից, կարգապահական վարույթը հարուցած մարմնից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից (դրանց պաշտոնատար անձանցից), ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջել ներկայացնել հարցի քննության համար նշանակություն ունեցող ապացույցներ, որոնք գտնվում են տվյալ անձանց ազդեցության ոլորտում՝ սահմանելով ժամկետ դրանք Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնելու համար, իսկ որոշումը կամովին չկատարելու դեպքում այն ներկայացնել կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

2) դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ հրավիրել վկաներ,

3) դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ նշանակել փորձաքննություն՝ քննության համար նշանակություն ունեցող հարցերի պարզաբանման նպատակով:

5. Վկաների չներկայանալու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու վկային հարկադրաբար ներկայացնելու վերաբերյալ: Հարկադրաբար ներկայացնելու վերաբերյալ որոշումը կատարվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

6. Բարձրագույն դատական խորհուրդը գործով ցուցմունք տվող անձանց նախազգուշացնում է ցուցմունք տալուց հրաժարվելու կամ սուտ ցուցմունք տալու, իսկ փորձագետին՝ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին:

7. Հարցի քննության համար հրավիրված վկային առաջինը հարցեր է տալիս այն կողմը, որի միջնորդությամբ հրավիրվել է վկան, ապա մյուս կողմը, իսկ վերջում՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամները: Եթե վկան հրավիրվել է Բարձրագույն դատական խորհրդի նախաձեռնությամբ, ապա առաջինը հարցեր է

տալիս Բարձրագույն դատական խորհուրդը, այնուհետև կողմերը՝ ըստ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած հերթականության:

8. Վկան իրավունք ունի հրաժարվել ցուցմունք տալ առանձին հարցերի վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրում է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր, իր ամուսնու կամ իր մերձավոր ազգականի դեմ:

9. Վարույթի նյութերի հետազոտումից հետո Բարձրագույն դատական խորհուրդը լսում է նիստին մասնակցող անձանց ամփոփիչ ելույթները, որից հետո հարցի քննությունը հայտարարվում է ավարտված: Հարցի քննությունն ավարտված հայտարարելուց հետո Բարձրագույն դատական խորհրդի նիստը նախագահողը հայտարարում է որոշման հրապարակման օրը, վայրը և ժամը:

10. Հարցի քննությունն ավարտված հայտարարելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդը հեռանում է որոշում կայացնելու:»:

Հոդված 53. Օրենքի 155-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը ենթակա է բողոքարկման այն պահից սկսած մեկամսյա ժամկետում, երբ բողոք բերող անձն (մարմինը) իմացել է կամ կարող էր իմանալ սույն օրենսգրքի 156.1-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապացույցների կամ հանգամանքների մասին:»:

2) 8-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 54. Օրենքում լրացնել նոր՝ 156.1-ին հոդված.

«Հոդված 156.1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը բողոքարկելը

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ համապատասխանաբար դատավորի կամ կարգապահական վարույթ հարուցած մարմնի բողոքը քննում է Բարձրագույն դատական խորհուրդը, եթե ի հայտ է եկել այնպիսի էական ապացույց կամ հանգամանք, որը բողոքարկողը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով և որը ողջամտորեն կարող էր ազդել որոշման վրա:
2. Բարձրագույն դատարան խորհուրդը բողոքը ստանալուց հետո այն անմիջապես ուղարկում է մյուս կողմին, որը կարող է Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնել բողոքի պատասխան այն ստանալու պահից 10 օրվա ընթացքում:
3. Բարձրագույն դատական խորհուրդը Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ ներկայացված բողոքները քննում և դրանց վերաբերյալ որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ գալիս է եզրահանգման, որ անհրաժեշտ է բողոքի քննությունն իրականացնել նիստում: Բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ կայացվում է որոշում:
4. Բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում կողմերը ծանուցվում են նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ բողոքի քննության համար: Բողոքի քննությունը դատական նիստում սկսվում է հարցը զեկուցող անդամի զեկուցումով, ով ներկայացնում է բողոքը և բողոքի պատասխանի փաստարկները: Բարձրագույն դատական խորհրդի անդամներն իրավունք ունեն հարցեր տալու զեկուցողին և նիստին ներկայացած կողմերին, որից հետո բողոքի քննությունը հայտարարվում է ավարտված:
5. Բողոքի քննության ժամանակ Բարձրագույն դատական խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:
6. Բողոքի քննությունը կատարվում և որոշումը կայացվում է բողոքը ստանալուց հետո երկամսյա ժամկետում:
7. Բողոքի քննության արդյունքներով Բարձրագույն դատական խորհուրդը կայացնում է բողոքարկվող որոշումն անփոփոխ թողնելու կամ որոշումը մասնակի

կամ ամբողջությամբ վերացնելու մասին որոշում: Որոշումն ընդունվում է Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:»:

Հոդված 55. Օրենքի 159-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «18-րդ գլխի» բառերը փոխարինել «19-րդ գլխի» բառերով և հանել «հարուցման և իրականացման» բառերը.

2) լրացնել նոր՝ 2.1. մաս.

«2.1. «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով դատավորի լիազորությունները կարող են դադարեցվել՝ հաշվի առնելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացրած եզրակացությունը:»:

Հոդված 56. Օրենքի 165-րդ հոդվածում լրացնել նոր՝ 1.1.-ին մաս.

«1.1. Դատավորի նկատմամբ ոչ իր լիազորությունների իրականացման կապակցությամբ քրեական հետապնդում հարուցելու դեպքում Գլխավոր դատախազն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Բարձրագույն դատական խորհրդին:»:

Հոդված 57. Օրենքի 166-րդ հոդվածի 27-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 58. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

2. Սույն օրենքի 1-ին, 4-րդ հոդվածները և 5-րդ հոդվածի 4-րդ կետն ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: Մինչև սույն մասում նշված նորմերի ուժի մեջ մտնելը Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է օպերատիվ-

հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության վերաբերյալ գործերի բաշխման կարգը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման դատավորների միջև:

3. Սույն օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետը և 44-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի ձևավորման պահից:

4. Սույն օրենքի 34-րդ հոդվածը՝ հոգեբանական թեստավորման մասով, ուժի մեջ է մտնում հոգեբանական թեստավորման համար Բարձրագույն դատական խորհրդի կողմից հաստատված կարգին համապատասխան՝ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված անհրաժեշտ պայմանների ստեղծման պահից:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը հաստատում է հոգեբանական թեստավորման չափանիշները և անցկացման կարգը:

6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն ապահովում է հոգեբանական թեստավորման անցկացման համար անհրաժեշտ պայմանները:

7. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում Ընդհանուր ժողովն ընտրում է Ոսումնական հարցերի և Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովների անդամներին և նույն օրը գործող Ոսումնական հարցերի և Կարգապահական հարցերի հանձնաժողովների լիազորությունները համարվում են դադարած:

8. Ընդհանուր ժողովը Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի առաջին կազմի համապատասխան երեքական դատավոր անդամներին և մեկ ոչ դատավոր անդամին ընտրում է չորս, իսկ երեքական դատավոր անդամների և մեկ ոչ դատավոր անդամի՝ երեք տարի ժամկետով:

9. Ընդհանուր ժողովի կողմից ընտրվող հանձնաժողովի անդամների պաշտոնավարման ժամկետը որոշվում է ըստ առավելագույն գործակից ստացած թեկնածուների: Սույն մասով նախատեսված գործակիցը հաշվարկվում է օրենսգրքի 76-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանված կարգով:

10. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը հաստատում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ոչ դատավոր անդամին առաջադրող հասարակական կազմակերպություններին ներկայացվող պահանջները, նրանց կողմից առաջադրվող թեկնածուների մրցույթի անցկացման և ընտրության անցկացման կարգն ու մանրամասները:

11. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում ձևավորվում է Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը, Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանվում են դատավորների գործունեության գնահատման մեթոդաբանությունը, գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը և դատավորների գործունեության գնահատման համար անհրաժեշտ այլ մանրամասները, ինչպես նաև դատավորների գործունեությունը գնահատելու հերթական ժամանակացույցը՝ ըստ համապատասխան տարիների և դատավորների:

12. Դատավորների առաջին հերթական գնահատումն իրականացվում է 2020 թվականի սեպտեմբերի 1-ից 2024 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում:

13. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է դատավորների աշխատանքային ներքին կարգապահական կանոնները:

14. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն ընտրված Բարձրագույն դատական խորհրդի նախագահը շարունակում է պաշտոնավարել մինչև որպես Բարձրագույն դատական խորհրդի նախագահ իր պաշտոնավարման ժամկետի ավարտը:

15. Սույն օրենքի՝ կարգապահական պատասխանատվության հիմքերի և վարույթի վերաբերյալ դրույթները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված կարգապահական վարույթների նկատմամբ: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ծագած հիմքերով (խախտումներով) հարուցվող կարգապահական վարույթների հարուցման նկատմամբ կիրառվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ օրենսգրքի՝ կարգապահական

պատասխանատվության ենթարկելու հիմքերը և 144-րդ հոդվածով նախատեսված ժամկետները:

16. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր անդամներին, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին և Վճռաբեկ դատարանի նախագահին մակագրված գործերի վերաբաշխում տեղի չի ունենում, իսկ սույն օրենքով սահմանված նվազեցումները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մակագրված գործերի վրա:

17. Սույն օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված 105.1-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանափակումը չի տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար անցկացված գրավոր քննության արդյունքների դատական կարգով բողոքարկման հետ կապված հարաբերությունների վրա:

18. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Ընդհանուր ժողովի գործունեության կարգը համապատասխանեցվում է սույն օրենքին և դրանով սահմանված հանձնաժողովների ընտրության նոր կարգավորումներին:

19. Սույն օրենքով լրացվող 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված առիթով կարգապահական վարույթ կարող է հարուցվել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կայացրած ակտերի հիման վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀՀ
ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ (Կ-428-20.12.2019,02.03.2020-ՊԻ-011/1) ԵՎ
ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-428-20.12.2019,02.03.2020-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2018 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածում՝

1) լրացնել նոր 2.1-րդ մաս.

~~«2.1. Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման դատավորների կողմից»։~~

2) 3-րդ մասից հանել «, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների» բառերը:

Հոդված 2. Օրենքի ամբողջ տեքստում «կարգապահական կարգապահական հարցերի հանձնաժողով» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով» բառերով և դրանց հոլովաձևերով:

Հոդված 3. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասում «ընտրվելու» բառից հետո լրացնել «նրա նկատմամբ սույն օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի 3.2.-րդ կետով սահմանված կարգապահական տույժի կիրառման» բառերը:

Հոդված 4. Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը հանել նախադասությունից հանել «, ինչպես նաև դրանք քննող դատավորների ցանկը» բառերը:

Հոդված 5. Օրենքի 45-րդ հոդվածում՝

1) վերնագրից հանել «և օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորներին» բառերը:

1) 1-ին մասի 42-րդ կետում «նախագահների» բառից հետո լրացնել «, կետը շարադրել նոր խմբագրությամբ.

2) «2) 25 տոկոս՝ Էթիկայի և կարգապահական հարցերի-և, ինչպես նաև դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովների» բառերը-անդամների համար.»:

3) 2) 1-ին մասի 5-րդ կետից հանել «Վճարել դատարանի և- Վճարել դատարանի պալատների նախագահների, ինչպես նաև » բառերը:

4) 3) 1-ին մասում լրացնել նոր՝ 5.1.-ին կետ-և 5.2-րդ կետեր.

«5.1-ի) 50 տոկոս՝ Վճարել դատարանի պալատների նախագահների համար.

5) 5.2) 60 տոկոս՝ Վճարել դատարանի նախագահի համար».

4) 3-րդ մասում «Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին» բառերը փոխարինել «Սույն օրենսգրքի 21-րդ հոդվածի 2.1-րդ մասով նախատեսված» բառերով:

Հոդված 6. Օրենքի 51-րդ հոդվածի 6-րդ մասում «գլխավոր դատախազը» բառերից հետո լրացնել «կամ նրա հանձնարարությամբ՝ տեղակալը» բառերը:

Հոդված 7. Օրենքի 53-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «և համապատասխան դատավորին» բառերը փոխարինել «, իսկ առանց դատարանի թույլտվության իրականացվող քննչական գործողության մասին՝ նաև համապատասխան դատավորին:» բառերով.

2) ~~2-րդ մասում «մասը շարադրել նոր խմբագրությամբ.~~

2) «2. Քրեական հետապնդման մեջ չգտնվող դատավորի մասնակցությամբ քննչական գործողությունը կատարվում է նախապես դատավորի հետ համաձայնեցված ժամանակ և վայրում» բառից հետո լրացնել «(եթե դատավորը սույն հոդվածի 1-ին մասի համաձայն իրազեկվել է, բացառությամբ դատարանի թույլտվությամբ իրականացվող քննչական գործողության իրականացման մասին)» բառերը: Քննչական գործողությունը իրականացնելիս առավելագույնս ապահովվում է քննչական գործողության գաղտնիությունը, դատավորի հեղինակության և անկախության նկատմամբ հարգանքը, բացառելով դատավորի գործունեությանը ուղղակի կամ անուղղակի որևէ միջամտություն:»:

Հոդված 8. Օրենքի 66-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր՝ 15-րդ և 16-րդ կետեր.

«15) ներկայացնել գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան և այդ օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ.

16) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացնել պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ, որոնք հաստատում են, որ իր գույքի փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը)

ողջամտորեն հիմնավորվում է օրինական եկամուտներով, կամ իր մոտ առկա չէ չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրը օրինական է և արժանահավատ է»:

Հոդված 10. Օրենքի 70-րդ հոդվածում՝

1) ~~_____ 2-րդ մասի մասում՝~~

1) ~~ա. 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «պահպանել ներքին աշխատանքային կարգապահության կանոնները.».~~

~~2) 2-րդ մասի 10-րդ և 11-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել.~~

3) ~~2-րդ մասի ք. 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.~~

«14) զերծ մնալ այնպիսի գործողություններ ձեռնարկելուց, որոնք ~~նպատակողջամտության սահմաններում կարող են հետապնդում~~—ստեղծել ինքնաբացարկի հիմքեր.».

~~4) 2-րդ մասը լրացնել նոր՝ 18-րդ կետ.~~

«18) ~~ինքնաբացարկի հիմքերի առկայության դեպքում դրանք բացահայտել կողմերին, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով հայտնել ինքնաբացարկ:».~~

5) ~~2) լրացնել նոր 3-րդ մաս.~~

«3. ~~Դատարանի լրումն սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարքագծի կանոնների՝ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի պալատի նախագահը պարտավոր է են լիարժեք և պատշաճ կատարել սույն օրենսգրքով սահմանված համապատասխանաբար դատարանի նախագահի պարտականությունները կատարել պատշաճ և ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են հանգեցնել դատարանի բնականոն գործունեության խաթարման և Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի համար սահմանված լիազորությունները .:»~~

Հոդված 11. Օրենքի 73-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «, եթե ողջամտորեն կարող է ընկալվել, որ այն կապված է իր պաշտոնեական պարտականություններն իրականացնելու հետ» բառերը»:

2) 5-րդ մասում «հարյուր հազար» բառերը փոխարինել «վաթսուն հազար» բառերով, իսկ «չորս հարյուր հազար» բառերը՝ «երկու հարյուր քառասուն հազար» բառերով:

Հոդված 12. Օրենքի 74-րդ հոդվածի 5-րդ մասի մասում՝

1) առաջին պարբերությունում «ժողովն իրականացնում է հետևյալ գործառույթները» բառերը փոխարինել «ժողովը» բառով.

2) 2-րդ կետում «Կարգապահական, Ոսումնական հարցերի» բառերից հետո լրացնել «, Դատավորների գործունեության գնահատման (այսուհետ՝ բառերը փոխարինել «Էթիկայի և կարգապահական, Ոսումնական հարցերի, ինչպես նաև Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողով») բառերը» բառերով:

Հոդված 13. Օրենքի 776-րդ հոդվածում՝

1) 1ին4-րդ մասում «ղեկավարը» բառից հետո լրացնել «Ընդհանուր ժողովի նիստից առնվազն մեկ ամիս առաջ» բառերը.

1)2) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. «6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ծանուցումը ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, թեկնածուն կարող է դիմում ներկայացնել Դատական դեպարտամենտի ղեկավարին՝ պահանջելով իր անունը չներառել քվեաթերթիկում:»:

3) լրացնել նոր՝ 6.1-6.3-րդ մասեր.

«6.1. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դիմումը չներկայացնելու դեպքում նույն մասով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում թեկնածուն Դատական դեպարտամենտի ղեկավարին է ներկայացնում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը (այսուհետ՝ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ):

6.2. Հարցաթերթիկը ստանալուց հետո՝ մեկօրյա ժամկետում, Դատական դեպարտամենտի ղեկավարը բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը

ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ 10-օրյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

6.3. Դատական դեպարտամենտի ղեկավարը թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի խորհրդատվական եզրակացությունը ստանալուց հետո այն տրամադրում է Ընդհանուր ժողովի անդամներին՝ Ընդհանուր ժողովի նիստից առնվազն երեք օր առաջ:»:

Հոդված 14. Օրենքի 77-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 77. Ընդհանուր ժողովի հանձնաժողովների ձևավորումը

1. Ընդհանուր ժողովը ձևավորում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողով և Ոսումնական հարցերի հանձնաժողով:»:

~~2) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.~~

2. «4. Հանձնաժողովներն իրականացնում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով իրենց վերապահված գործառույթները:

3. Դատարանների նախագահները, Վճռաբեկ դատարանի պալատների նախագահները և Բարձրագույն դատական խորհրդի անդամները չեն կարող լինել Ընդհանուր ժողովի՝ սույն օրենսգրքով նախատեսված հանձնաժողովների անդամներ: Երկու անձը միաժամանակ չի կարող լինել Ընդհանուր ժողովի երկու հանձնաժողովի անդամ:

4. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմում ընդգրկվում է հանձնաժողովը կազմված է ութ անդամներից, որոնցից վեցը՝ դատավոր անդամներ, իսկ երկուսը՝ դատավոր չհանդիսացող անդամներ: Դատավոր անդամներից երկուսը ընտրվում են մասնագիտացված դատարանների դատավորներից՝ յուրաքանչյուր մասնագիտացված դատարանից՝ մեկ դատավոր, երկուսը՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներից՝ համապատասխանաբար քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ, մեկը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, մեկը՝ Վճռաբեկ դատարանի դատավորներից: Բացի դատավորներից, Էթիկայի և կարգապահական հարցերի

հանձնաժողովում ընդգրկվում են 2 հեղինակավոր իրավաբաններ, որոնց ներկայացնում են, սույն հոդվածի 7.1-րդ մասում մատնանշված գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները:»:

3) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Ուսումնական հարցերի հանձնաժողովի կազմում ընդգրկվում է յոթ անդամ, որոնցից մեկը՝ Վճռաբեկ դատարանի դատավորներից, երկուսը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, երկուսը՝ առաջին ատյանի դատարանների դատավորներից: Բացի դատավորներից, Ուսումնական հարցերի հանձնաժողովում ընդգրկվում են 2 հեղինակավոր իրավաբաններ, որոնց ներկայացնում են սույն հոդվածի 7.1-ին մասում մատնանշված գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները և որոնց նկատմամբ տարածվում են այդ մասով սահմանված պահանջները: Ուսումնական հարցերի հանձնաժողովի հեղինակավոր իրավաբաններին ընտրում է Ընդհանուր ժողովը՝ սույն հոդվածի 7.1-ին մասով սահմանված կարգով՝ չորս տարի ժամկետով:»

4) լրացնել նոր՝ 5.1-ին և 5.2-րդ մասեր.

«5.1. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի կազմում ընդգրկվում են 5 անդամ՝ երկու իրավաբան գիտնական, մեկ դատավոր՝ Վճռաբեկ դատարանից, մեկ դատավոր՝ վերաքննիչ դատարանից և մեկ դատավոր՝ առաջին ատյանի դատարանից:

5.2. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի անդամի թեկնածու կարող է ընտրվել այն դատավորը, ով ունի դատավորի պաշտոնում առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ և գործունեությունը գնահատված լինելու դեպքում՝ գնահատման վերջին արդյունքներով՝ բարձր կամ լավ գնահատական, իսկ իրավաբան գիտնական անդամի թեկնածու կարող է ընտրվել այն հեղինակավոր իրավաբանը, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով և ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառություն:»:

4) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

5. ~~«6. Գործող դատավորը և իրավաբան գիտնականը՝ բացառությամբ էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի, որպես հանձնաժողովի անդամ կարող են առաջադրվել դատավոր անդամների թեկնածուները առաջադրվում են ինքնաառաջադրման կամ Ընդհանուր ժողովի որևէ այլ դատավորի կողմից իրենց թեկնածուի համաձայնությամբ առաջադրվելու եղանակով»:~~

5) 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ:

~~«7. Հանձնաժողովների անդամներին ընտրում է Ընդհանուր ժողովը՝ գաղտնի քվեարկությամբ՝ չորս տարի ժամկետով: Ընդհանուր ժողովի կողմից հանձնաժողովների ոչ դատավոր անդամներին սահմանված ժամկետում չընտրելու դեպքում քվեարկությունից հետո տասնօրյա ժամկետում նրանց ընտրում է Բարձրագույն դատական խորհուրդը: Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամների ընտրության առանձնահատկությունները սահմանվում են սույն հոդվածի 7.1. ին մասով»:~~

6) լրացնել նոր՝ 7.1. ին մաս:

6. ~~«7.1. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր անդամներին ընտրում է Ընդհանուր ժողովը՝ գաղտնի քվեարկությամբ՝ երկուչորս տարի ժամկետով:~~

7. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ~~ոչ~~ դատավոր անդամներին ներկայացնում չհանդիսացող անդամների թեկնածուները առաջադրվում են համապատասխան հասարակական կազմակերպությունները: սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով:

8. Որպես Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ~~անդամ~~ դատավոր չհանդիսացող անդամի թեկնածու կարող է առաջադրվել այն ~~հեղինակավոր~~ իրավաբանը, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով ~~և~~ ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան կամ մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառություն, չի հանդիսանում որևէ կուսակցության անդամ ~~չէ~~ և ~~չունի դատվածություն դիտավորությամբ կատարված հանցանքի համար: Վերջիններիս նրա նկատմամբ առկա չեն սույն օրենսգրքի 112-րդ~~

հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված սահմանափակումները:

9. Սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված թեկնածուներին ներգրավելու նպատակով Դատական դեպարտամենտը Էթիկայի և կարգապահական հանձնաժողովի դատավոր անդամների ընտրությունից առնվազն երեսուն օր առաջ հայտարարում է մրցույթ, որի շրջանակներում մեկական թեկնածու կարող են առաջադրել ~~այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակներից է մարդու իրավունքների պաշտպանությունը կամ դատական իշխանության հանրային հաշվետվողականության բարձրացմանն ուղղված գործունեությունը և որոնք վերջին հինգ տարիներին իրականացնում են նման գործունեություն~~ Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված պահանջներին բավարարող հասարակական կազմակերպությունները:

Թեկնածուների կենսագրությունները և նրանց ներկայացրած կազմակերպությունների վերաբերյալ տեղեկությունները հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական կայքում: ~~Հանձնաժողովի անդամների ընտրությունն իրականացվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ հաշվի առնելով թեկնածուի կրթությունը, նրա և նրան ներկայացրած կազմակերպության՝ սույն հոդվածով սահմանված պահանջներին համապատասխանությունը, քննարկման առարկա բնագավառում գործունեության փորձը, արդյունքները, ձեռքբերումները և ուշադրության արժանի այլ հանգամանքներ: Հանձնաժողովի անդամներին ընտրելու վերաբերյալ որոշումն ընդունվում է Ընդհանուր ժողովի կողմից քվեարկությանը մասնակցող դատավորների ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, երկու տարի ժամկետով: Մրցույթի Սույն մասով նախատեսված հասարակական կազմակերպություններին ներկայացվող պահանջները, մրցույթի անցկացման և հանձնաժողովի անդամների ընտրության կարգն ու մանրամասները սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:»:~~

7) լրացնել նոր՝ 9-11-րդ մասեր:

10. «9-Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի _____ դատավոր չհանդիսացող անդամներին ընտրում է Ընդհանուր ժողովը քվեարկությանը

մասնակցող դատավորների ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, չորս տարի ժամկետով: Ընտրության ժամանակ հաշվի է առնվում թեկնածուի կրթությունը, նրա՝ սույն հոդվածով սահմանված պահանջներին և նրան ներկայացրած կազմակերպության՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված պահանջներին համապատասխանությունը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

11. Ուսումնական հարցերի հանձնաժողովը կազմված է յոթ անդամից, որոնցից հինգը՝ դատավոր անդամներ և երկուսը՝ դատավոր չհանդիսացող անդամներ: Դատավոր անդամներից մեկը ընտրվում է Վճռաբեկ դատարանի դատավորներից, երկուսը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, երկուսը՝ առաջին ատյանի դատարանների դատավորներից:

12. Ուսումնական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամ կարող է ընտրվել այն իրավաբանը, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով և ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան կամ մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառություն:

13. Դատավորների գործունեության գնահատման, ~~ինչպես նաև Էթիկայի և կարգապահական հարցերի~~ հանձնաժողովը կազմված է հինգ անդամից, որոնցից երեքը՝ դատավոր անդամներ և երկուսը՝ իրավաբան գիտնականներ: Դատավոր անդամներից մեկը ընտրվում է Վճռաբեկ դատարանի դատավորներից, մեկը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, մեկը՝ առաջին ատյանի դատարաններից:

14. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել այն դատավորը, որն ունի դատավորի պաշտոնում առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ և գործունեությունը գնահատված լինելու դեպքում՝ գնահատման վերջին արդյունքներով՝ բարձր կամ լավ գնահատական:

15. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել այն իրավաբան գիտնականը, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով և ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառություն:

16. Դատավորների գործունեության գնահատման և ՌԽումնական հարցերի հանձնաժողովների ոչ դատավոր անդամների թեկնածուները առաջադրվում են ինքնաառաջադրման կամ այլ դատավորի կողմից թեկնածուի համաձայնությամբ առաջադրվելու, իսկ դատավոր չհանդիսացող անդամները՝ նաև սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված պահանջներին բավարարող հասարակական կազմակերպությունների կողմից առաջադրվելու եղանակով:

17. Դատավորների գործունեության գնահատման և Ոսումնական հարցերի հանձնաժողովների անդամներին, Ընդհանուր ժողովի հաստատած գործունեության կարգին համապատասխան, ընտրում է Ընդհանուր ժողովը՝ գաղտնի քվեարկությամբ՝ չորս տարի ժամկետով:

18. Ընդհանուր ժողովի կողմից սույն հոդվածով նախատեսված հանձնաժողովների՝ դատավոր չհանդիսացող անդամների պաշտոնը թափուր մնալու օրվանից հետո մեկ ամսյա ժամկետում հանձնաժողովի անդամ չընտրելու դեպքում նրանց ընտրում է Բարձրագույն դատական խորհուրդը տասնօրյա ժամկետում:

19. Հանձնաժողովների՝ դատավոր չհանդիսացող անդամին Դատական դեպարտամենտը վճարում է վարձատրություն վճարվում է հատուցում Կառավարության սահմանած կարգով և չափով:»:

10

Հոդված 15. Օրենքը լրացնել նոր 77.1-րդ հոդվածով.

«Հոդված 77.1 Ընդհանուր ժողովի հանձնաժողովների անդամի լիազորությունների դադարումը և դադարեցումը

1. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են սույն օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝

1) նրա լիազորությունների ժամկետը ավարտվելու դեպքում.

2) հրաժարական ներկայացնելու դեպքում.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող ճանաչվելու կամ մահացած հայտարարվելու դեպքում.

4) նրա նկատմամբ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ կայացվելու, կամ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցվելու դեպքում.

5) նրա մահվան դեպքում.

6) դատավոր անդամի պարագայում՝ որպես դատավոր լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու դեպքերում, և:

2. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

1) երկարատև անաշխատունակության կամ այլ հարգելի պատճառով մեկ տարվա ընթացքում հանձնաժողովի նիստերին նիստերի առնվազն կեսից բացակայելու դեպքում.

2) մեկ տարվա ընթացքում հանձնաժողովի նիստերից անհարգելի պատճառով առնվազն երկու անգամ ~~չմասնակցելու, բացակայելու~~ դեպքում.

3) առնվազն մեկ անգամ քվեարկությունից հրաժարվելու կամ ձեռնպահ մնալու դեպքում, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված քվեարկությանը մասնակցությունը բացառող դեպքերի:

4) օրենքով և Հանձնաժողովի աշխատակարգով նախատեսված իր պարտականությունները ~~չկատարելը, իսկ դատավոր անդամների չկատարելու~~ դեպքում՝ նաև որպես դատավոր լիազորությունները դադարեցվելու կամ դադարելու դեպքում:

3. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցնելու հարցը լուծելու համար Հանձնաժողովի նախագահի կողմից նիստ չհրավիրվելու դեպքում այն հրավիրվում է Հանձնաժողովի առնվազն երեք անդամի կողմից: Հանձնաժողովը կայացնում է որոշում Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցնելու մասին:

4. Հանձնաժողովի նախագահի ~~լիազորությունների~~ լիազորությունները դադարում են նրա՝ որպես Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարման կամ դադարեցման, ինչպես նաև նրա՝ Հանձնաժողովի նախագահի պաշտոնից հրաժարական ներկայացնելու դեպքում: Հանձնաժողովի նախագահի կողմից իր պարտականությունները չկատարելը հիմք է Հանձնաժողովի անդամների ընդհանուր

թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ նրա լիազորությունները դադարեցնելու համար:

115. Հանձնաժողովի անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում ~~հանձնաժողովի~~Հանձնաժողովի նախագահը ~~յոթօրյա~~յոթօրյա ժամկետում դիմում է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ արտահերթ Ընդհանուր ժողով հրավիրելու և հանձնաժողովի նոր անդամի ընտրությունը կազմակերպելու համար: Արտահերթ Ընդհանուր ժողով պետք է հրավիրվի ~~հանձնաժողովի~~Հանձնաժողովի նախագահի դիմումը ստանալու պահից՝ մեկամսյա ժամկետում:»:

Հոդված 1416. Օրենքի 78-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «իր կազմից» ~~բառերից հետո լրացնել «, իսկ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովն բառերը փոխարինել «իր դատավոր անդամների կազմից» բառերը~~բառերը:

2) լրացնել նոր՝ 4-րդ մաս.

«4. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը՝

1) իրականացնում է դատավորների գործունեության գնահատումը,

2) սույն օրենսգրքի 142-րդ հոդվածով սահմանված՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտում կամ դատավորի վարքագծի կանոնների խախտում (այդ թվում՝ էական կարգապահական խախտում) հայտնաբերելու դեպքում դիմում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար:»:

3) իրականացնում է սույն օրենսգրքով իրեն վերապահված այլ գործառույթներ:»:

Հոդված 1517. Օրենքի 81-րդ հոդվածի 4-րդ մասում լրացնել նոր նախադասություն.

«Բարձրագույն դատական խորհրդի՝ Ընդհանուր ժողովի կողմից ընտրվող դատավոր անդամի ընտրության համար Ընդհանուր ժողովի նիստը գումարվում է այն ժամկետում, որ ապահովվի Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածուների վերաբերյալ սույն օրենսգրքի 76-րդ հոդվածի 6.3-րդ մասով

սահմանված ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի խորհրդատվական եզրակացության տրամադրումը Ընդհանուր ժողովի անդամներին:»:

Հոդված 18. Օրենքի 84-րդ հոդվածում՝

1) 9-րդ մասի «ընտրվում է» բառից հետո լրացնել «առանց վերընտրման իրավունքի ~~երկուսուկես՝ երկու~~ տարի վեց ամիս ժամկետով, բայց ոչ ավելի քան» բառերը.

2) 10-րդ մասի «անդամի թափուր տեղը համալրվելուց» բառերը փոխարինել «նախագահի պաշտոնը թափուր մնալուց» բառերով:

Հոդված 1619. Օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել նոր նախադասություն.

«Սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտման առնչությամբ Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցում և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհուրդ է դիմում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:»:

Հոդված 1720. Օրենքի 86-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 3-րդ կետում «մտնելը» բառից հետո լրացնել «կամ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելը» բառերը ~~»:~~»:

2) ~~լրացնել նոր՝ 3.1 մաս.~~

~~«3.1. «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները խախտելու հիմքով լիազորությունները կարող են դադարեցվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ Բարձրագույն դատական խորհուրդի ներկայացրած եզրակացության հիման վրա:»:~~

Հոդված 1821. Օրենքի 89-րդ հոդվածում 1-ին մասի 27-րդ կետում «սահմանում է» բառերից հետո լրացնել «դատավորների ներքին աշխատանքային կարգապահության կանոնները,» բառերը»:

Հոդված 1922. Օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասում «երբ դրանք» բառերից հետո լրացնել «Բարձրագույն դատական խորհրդի անդամի կամ դատավորի վարույթի մասնակցի միջնորդությամբ» բառերը, ~~երկրորդ «խորհրդի «որոշմամբ»~~ բառից հետո առաջ լրացնել «պատճառաբանված» բառը, իսկ «, կամ դատավորն այդպիսի միջնորդություն է ներկայացրել» բառերը հանել:

Հոդված — 2023. Օրենքի 94-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասում «ընդունվում են» բառերից հետո լրացնել «բաց քվեարկությամբ»¹» բառերը.

~~2) 5-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:~~

2) 5-րդ մասում «գաղտնի քվեարկությամբ» բառերը փոխարինել «խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ» բառերով. .

3) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, իսկ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշումները՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Եթե քվեարկության արդյունքով որևէ որոշման օգտին բավարար քանակի ձայների բացակայության պատճառով Բարձրագույն դատական խորհուրդը որոշում չի ընդունում, ապա համապատասխան միջնորդությունը մերժելու վերաբերյալ

որոշումը համարվում է ընդունված, իսկ որոշումը կազմում և ստորագրում են Բարձրագույն դատական խորհրդի այն անդամները, որոնք քվեարկել են միջնորդությունը մերժելու օգտին:»:

Հոդված 2124. Օրենքի 95-րդ հոդվածի 6-րդ մասից հանել վերջին նախադասությունը, 4-րդ մասից, 113-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետից, 116-րդ հոդվածի 4-6-րդ մասերից, 128-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «կամ պատգամավոր ընտրված լինելու» բառերը, իսկ «մայրության, երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման» բառերը փոխարինել «հղիության և ծննդաբերության, նորածնի որդեգրման կամ նորածնի խնամակալ նշանակվելու» բառերով:

Հոդված ————— 2225. Օրենքի 95-րդ հոդվածի 6-րդ մասից հանել վերջին նախադասությունը:

Հոդված 26. Օրենքի 97-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «28» թիվը փոխարինել «25» թվով.

2) 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) ունեն անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներից առնվազն մեկ՝ ստանդարտացված թեստային համակարգերով ստուգվող լեզվական գիտելիքների՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակի իմացություն:»:

2) 3) 5-րդ կետում «հինգ» բառը փոխարինել «երեք» բառով:

Հոդված 2327. Օրենքի 98-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 7-րդ կետում «փաստաթուղթ» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 3.1-րդ մասով նախատեսված դեպքի» բառերը.

2) 2-րդ մասը լրացնել նոր՝ 13.1-րդ կետով.

«13.1) բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ-→»:

3) լրացնել նոր 3.1-րդ մասով.

«3.1.

~~Հոդված 24.~~ Եթե հավակնորդը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հայտ ներկայացնելու պահին ունի միայն ոուսերեն լեզվի ստանդարտացված թեստային համակարգերով ստուգվող լեզվական գիտելիքի իմացություն, ապա պարտավորվում է մինչև Արդարադատության ակադեմիայում ուսուցման ավարտը ներկայացնել 97-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված այլ լեզվի իմացության վերաբերյալ համապատասխան ապացույցը, հակառակ դեպքում նա չի ներառվում դատավորների թեկնածուների ցուցակում:»:

Հոդված 28. Օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասում «լիարժեքությունն» բառից առաջ լրացնել «, բացառությամբ բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկի, » բառերը:

Հոդված 29. Օրենքի 104-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում «առաջարկում է» բառերից հետո լրացնել «գործունեությունը գնահատված լինելու դեպքում գնահատման վերջին արդյունքներով՝ բարձր կամ լավ գնահատական ստացած» բառերը.

2) 6-րդ մասում լրացնել նոր նախադասություն.

«Գնահատման հանձնաժողովի անդամների անունները ենթակա չեն հրապարակման մինչև քննության արդյունքների հրապարակումը:»:

Հոդված 2530. Օրենքի 105-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Հավակնորդների գրավոր քննության աշխատանքները գնահատման հանձնաժողովին տրամադրվում են անանուն՝ ծածկագրված (ապանձնավորված) վիճակում: Գնահատման հանձնաժողովի անդամները պետք է ապահովված լինեն գնահատման չափորոշիչներին համապատասխան միավորների սանդղակով և ուղենիշային տիպային պատասխաններով: Գնահատման հանձնաժողովի անդամները չպետք է գնահատման ընթացքում միմյանց հետ քննարկեն գրավոր քննության աշխատանքին տրվող գնահատականները և դրանց հիմնավորումները:

Հանձնաժողովի անդամները ~~գնահատական նշանակելիս գրավոր քննության աշխատանքները գնահատելիս~~ հաշվի են առնում ~~սույն օրենսգրքի 103-րդ հոդվածով սահմանված հատկանիշները, որոնց պետք է համապատասխանեն~~ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած գնահատման չափորոշիչները:»:

~~—~~ **Հոդված — 2631.** Օրենքը լրացնել նոր՝ 105.1-ին հոդվածով.

«**Հոդված 105.1. Գրավոր քննության արդյունքների բողոքարկումը**

1. Գրավոր քննության արդյունքները կարող են բողոքարկվել **Բողոքարկման բողոքարկման** հանձնաժողով՝ դրանք հրապարակելուց հետո տասնհինգօրյա ժամկետում:

2. Համապատասխան մասնագիտացմամբ բողոքարկման հանձնաժողովը կազմավորվում է տվյալ մասնագիտացմամբ քննության արդյունքների դեմ առաջին բողոքը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում՝ երկու դատավորի և մեկ իրավաբան գիտնականի կազմով, որոնք վիճակահանությամբ ընտրվում են Ոստումնական հարցերի հանձնաժողովի կողմից առաջարկված տվյալ մասնագիտացման 5 և Լիազոր մարմնի կողմից առաջարկված իրավունքի համապատասխան բնագավառի առնվազն 3 իրավաբան գիտնականի թեկնածուների կազմից՝ նրանց համաձայնությամբ: Գնահատման հանձնաժողովի անդամները չեն կարող ընդգրկվել **Բողոքարկման բողոքարկման** հանձնաժողովի կազմում:

3. Բողոքարկման հանձնաժողովի կազմում ընդգրկվելու, հանձնաժողովի աշխատանքն իրականացնելու կարգի, հանձնաժողովի անդամների վարձատրության, նրանց լիազորությունների դադարեցման, ինչպես նաև հանձնաժողովի գործունեության դադարման նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 104-րդ հոդվածով, իսկ բողոքարկման արդյունքների վերանայման նկատմամբ 105-րդ հոդվածով սահմանված դրույթները:

4. Բողոքարկման հանձնաժողովը բողոքը քննում և դրա վերաբերյալ կայացնում է որոշում բողոքարկման համար սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում: Բողոքարկման հանձնաժողովը կարող է քննության արդյունքների դեմ բերված բողոքը մերժել կամ բավարարել՝ մասնակի կամ ամբողջությամբ:

5. Գրավոր քննության արդյունքները դատական կարգով կարող են բողոքարկվել ընթացակարգային խախտումների հիմքով, –եթե դրանք բողոքարկվել են Բողոքարկման բողոքարկման հանձնաժողովին:»:

Հոդված — 2732. Օրենքի 106-րդ հոդվածի 1-ին մասում «հինգույթ» բառը փոխարինել «երեք «տասը» բառով, իսկ «ութ» բառը՝ «վեց» բառով:

Հոդված — 2833. Օրենքի 107-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «գրավոր» բառից առաջ լրացնել քննության արդյունքները հրապարակելուց հետո» բառերը փոխարինել «Բողոքարկման արդյունքները հրապարակելուց, իսկ բողոքներ չլինելու դեպքում՝ բառերը՝ բողոքարկման ժամկետը լրանալուց հետո» բառերով.

2) լրացնել նոր 81.1-րդ մասնաստվ.

«8.1. Միասնական 1.1. Դատական դեպարտամենտը միասնական համալրված ցուցակը ստանալու օրը Բարձրագույն դատական խորհուրդի խորհուրդ ներկայացնելու հետ միաժամանակ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում միասնական համալրված ցուցակում ներառված հավակնորդների բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկները՝ ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ մեկ ամսյա՝ մեկամսյա ժամկետում դրանց վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացություն ստանալու նպատակով:»:

Հոդված — 29. ~~Օրենքի 108-րդ հոդվածում՝~~

1) ~~1~~ ~~իսկ~~ 3) 8-րդ մասում «միավորները» բառից հետո լրացնել նոր նախադասություն.

«Այս փուլում Բարձրագույն դատական խորհուրդն ուսումնասիրում է նաև հավակնորդի ներկայացրած հարցաթերթիկի «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով իրականացված ուսումնասիրությունների հիման վրա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի

կողմից ~~տրամադրած՝ հավակնորդներ կայացված~~ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական ~~բնույթի~~ եզրակացությունը:»» բառերը:

2)

Հոդված 34. Օրենքի 108-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «ինքնատիրապետում, » բառից հետո լրացնել «բարեվարքություն, » բառը:

1) _____ լրացնել նոր 1.1.-ին մաս.

«1.1. Հարցազրույցից առաջ՝ հինգ օրվա ընթացքում, հավակնորդներն անցնում են հոգեբանական թեստավորում: Հոգեբանական թեստը կազմվում է սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված հատկանիշները գնահատելու նպատակով, և դրա արդյունքը ստացվում է ըստ նախապես մշակված էլեկտրոնային համակարգի: Բարձրագույն դատական խորհուրդը հաստատում է հոգեբանական թեստավորման չափանիշները և անցկացման կարգը, որի հիման վրա թեստավորման անցկացման համար անհրաժեշտ պայմաններն ապահովում է Լիազոր մարմինը: Թեստի արդյունքներն ունեն խորհրդատվական նշանակություն, տրամադրվում են հավակնորդին և Բարձրագույն դատական խորհրդին:»:

2) 3 2-րդ մասի 1-ին կետում «անձնական գործի» բառերից հետո լրացնել «, ներառյալ՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած խորհրդատվական եզրակացության» բառերով

3) 4) լրացնել նոր 8-րդ մաս.

«8. Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքները, հոգեբանական թեստի արդյունքները և հավակնորդի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ ~~հավակնորդի~~ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական ~~բնույթի~~ եզրակացությունը:»:

Հոդված — 3035. Օրենքի 109-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասում «գաղտնի» բառը փոխարինել «բաց» ~~բառով~~ ըվեարկություն՝
խորհրդակցական սենյակում» բառերով:
- 2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.
- 3) 3-րդ մասից հանել վերջին նախադասությունը.
- 4) 7-րդ մասից հանել վերջին նախադասությունը:

Հոդված 3136. Օրենքի 111-րդ հոդվածի 6-րդ մասում, 113-րդ հոդվածի 5-րդ մասում, 117-րդ հոդվածի 4-րդ մասում, 119-րդ հոդվածի 2-րդ մասում, 120-րդ հոդվածի 3-րդ մասում, 124-րդ հոդվածի 3-րդ մասում «գաղտնի» բառը փոխարինել «բաց» ~~բառով~~ խորհրդակցական սենյակում՝բաց » բառերով:

Հոդված 3237. Օրենքի 121-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասից հանել «տվյալ դատարանում ~~ունեն դատավորի ոչ պակաս, քան երեք տարվա փորձառություն,»» _____ բառերը.
2) ~~2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.~~~~
- 2) _____ 5-րդ մասից հանել « 2-րդ մասում «Տվյալ դատարանում դատավորի» բառերը փոխարինել «Դատավորի» բառով և հանել «տվյալ դատարանում» բառերը.
- 3) _____ 5-րդ մասում «գաղտնի» բառը ~~փոխարինել «բաց» բառով~~ և հանել 2-րդ նախադասությունը:

Հոդված 3338. Օրենքի 123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետում «վերջին 10 տարիների ընթացքում առնվազն ութ» բառերը փոխարինել «վերջին ութ տարիների ընթացքում առնվազն վեց» բառերով:

— **Հոդված ~~34~~ 39.** Օրենքի 124-րդ հոդվածում՝

- 1) ուժը կորցրած ճանաչել 4-րդ մասը.
- 2) 5-րդ և 8-րդ մասերից հանել վերջին նախադասությունները:

Հոդված — 3540. Օրենքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3) իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող և վերջին 10 տարիների ընթացքում առնվազն 8 տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում իրավունք դասավանդած կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարած անձը:»:

Հոդված 3641. Օրենքի 133-րդ հոդվածում՝

~~1) 3-րդ մասում «գաղտնի» բառը փոխարինել «բաց» բառով.~~

~~2) ուժը կորցրած ճանաչել 4-րդ մասը.~~

~~— 23) 5-րդ և 8-րդ մասերից հանել վերջին նախադասությունները:~~

Հոդված 3742. Օրենքի 134-րդ հոդվածում՝

~~1) 1-ին մասից հանել «տվյալ դատարանում ունեն ոչ պակաս, քան երեք տարվա դատավորի փորձառություն,» բառերը.~~

~~1)2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.~~

~~2)1) 5-րդ մասում «գաղտնի» բառը փոխարինել «բաց» բառով.~~

~~3)2) 6-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.~~

~~4)3) 7-րդ մասից հանել վերջին նախադասությունը:~~

Հոդված 3843. Օրենքի 135-րդ հոդվածում՝

~~1) 1-ին մասից հանել «տվյալ դատարանում ունեն ոչ պակաս, քան երեք տարվա դատավորի փորձառություն,» բառերը.~~

~~2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.~~

~~3~~

~~1) 5-րդ մասում «գաղտնի» բառը փոխարինել «բաց» բառով.~~

~~4)2) 6-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.~~

53) 7-րդ մասից հանել վերջին նախադասությունը:

Հոդված — 3944. Օրենքի 18-րդ գլուխը շարադրել նոր խմբագրությամբ.

««ԳԼՈՒԽ 18

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հոդված 136. Դատավորների գործունեության գնահատման նպատակը

1. Դատավորի գործունեությունը ենթակա է գնահատման:
 2. Դատավորների գործունեության գնահատման նպատակն է՝
 - 1) առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները կազմելիս նպաստել լավագույն թեկնածուների ընտրությանը.
 - 2) նպաստել դատավորների վերապատրաստման ուղղությունների ընտրությանը.
 - 3) բացահայտել դատավորի աշխատանքի արդյունավետությունը բարելավելու ուղիները.
 - 4) նպաստել դատավորի ինքնակատարելագործմանը.
 - 5) նպաստել դատարանի գործունեության արդյունավետության բարելավմանը:
 3. Դատավորի գործունեության գնահատման արդյունքները տրամադրվում են՝
 - 1) Ոստումնական հարցերի հանձնաժողովին՝ դատավորների վերապատրաստման ուղղություններն ընտրելու.
 - 2) գնահատվող դատավորին՝ իր աշխատանքի արդյունավետությունը բարելավելու և ինքնակատարելագործվելու.
- 3)3) սույն գլխով նախատեսված դեպքում** էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար.
- 4) դատարանի նախագահին՝ դատարանի գործունեության արդյունավետությունը բարելավելու նպատակով:

4. Բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի, դատավորների գործունեության գնահատման արդյունքները և այդ կապակցությամբ ձեռք բերված տվյալներն ու տեղեկությունները գաղտնի են:

Հոդված 137. Դատավորի գործունեության գնահատման տեսակները

1. Դատավորի գործունեությունը ենթակա է հերթական գնահատման՝ յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ, իսկ դատավորի նախաձեռնությամբ կամ սույն օրենսգրքով սահմանված դեպքերում՝ արտահերթ:
2. Դատավորի նախաձեռնությամբ արտահերթ գնահատում չի իրականացվում, եթե դատավորի գործունեությունը վերջին երկու տարվա ընթացքում գնահատվել է:
3. Դատավորի գործունեության գնահատումն իրականացվում է Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով և ժամկետներում:

Հոդված 138. Դատավորների գործունեության գնահատման չափանիշները

1. Դատավորների գործունեությունը գնահատվում է դատավորի աշխատանքի որակն ու արդյունավետությունը, ինչպես նաև դատավորի արհեստավարժությունն ու վարքագիծը բնութագրող՝ սույն հոդվածով սահմանված ~~չափանիշների հիման վրա, եթե հնարավոր է տվյալ դատավորի գնահատումն իրականացնել այդկիրառելի չափանիշների հիման վրա:~~
2. Դատավորի աշխատանքի որակի և արհեստավարժության գնահատման չափանիշներն են՝
 - 1) դատական ակտը հիմնավորելու կարողությունը.
 - 2) դատական նիստը կառավարելու և օրենքով սահմանված կարգով անցկացնելու կարողությունը:
3. Դատավորի աշխատանքի արդյունավետության գնահատման չափանիշներ ~~—ն են՝~~
 - 1) աշխատանքային ծանրաբեռնվածության արդյունավետ կառավարման ունակությունը և աշխատանքի պլանավորումը.

2) ողջամիտ ժամկետում գործեր քննելն ու դատական ակտեր կայացնելը.

3) դատավորի կողմից առանձին դատավարական գործողությունների կատարման համար օրենքով սահմանված ժամկետների պահպանումը.

4) արդյունավետ աշխատամիջավայր ապահովելու կարողությունը:

4. Դատավորի էթիկայի և վարքագծի կանոնի գնահատման **չափանիշներն** են՝

1) վարքագծի և էթիկայի կանոնների պահպանումը.

2) դատարանի հանրային ընկալմանն ու դատարանի նկատմամբ վստահությանը նպաստելը, այլ դատավորների և դատարանի աշխատակազմի նկատմամբ դրսևորած վերաբերմունքը:

5. Սույն հոդվածով սահմանված գնահատման չափանիշներով գնահատման համար հանձնաժողովը պետք է հաշվի առնի դատավորի քննած գործերի առնվազն 10 դատական նիստի ձայնային արձանագրություններ (բացակայության դեպքում՝ պարզ թղթային արձանագրություններ) և առնվազն 10 գործն ըստ էության լուծող դատական ակտեր (պատահական ընտրությամբ):

Հոդված 139. Դատավորների գործունեության գնահատման կարգը

Հոդված 139. Դատավորների գործունեության գնահատման կարգը

1. Դատավորների գործունեության գնահատումն իրականացնում է Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը՝ սույն օրենսգրքով սահմանված չափանիշների հիման վրա:

2. Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է դատավորների գործունեության գնահատման մեթոդաբանությունը՝ ներառյալ սույն օրենսգրքի 138-րդ հոդվածով սահմանված չափանիշների գնահատման ցուցիչները, գնահատման համար

անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը և դատավորների գործունեության գնահատման համար անհրաժեշտ այլ մանրամասները:

3. Դատավորների գործունեության գնահատման մեթոդաբանությունը սահմանելիս դատավորի գործունեության գնահատման համար առաջնահերթություն է տրվում սույն օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված չափանիշներին, որոնք դատավորին տրվող գնահատականի ձևավորման համար ունեն որոշիչ նշանակություն:

4. Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է դատավորների գործունեությունը գնահատելու հերթական ժամանակացույցը՝ ըստ համապատասխան տարիների և դատավորների:

Հոդված 140. Դատավորների գործունեության գնահատման արդյունքների ամփոփումը

1. Գնահատման արդյունքների վերաբերյալ կազմվում է որոշման նախագիծ, որը ներառում է գնահատման արդյունքի ամփոփագիր:

2. Գնահատման արդյունքների վերաբերյալ որոշման նախագիծն ուղարկվում է դատավորին, որն իրավունք ունի այն ստանալու պահից յոթնօրյա ժամկետում ներկայացնելու նախագծի վերաբերյալ իր նկատառումները:

3. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովն ուսումնասիրում է գնահատման արդյունքների վերաբերյալ դատավորի նկատառումները և որոշում կայացնում գնահատման արդյունքների վերաբերյալ:

4. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը գնահատման ընդհանուր արդյունքների հիման վրա դատավորների գործունեությունը գնահատում է բարձր, լավ, միջին կամ ցածր՝ հիմք ընդունելով Բարձագույն դատական խորհրդի կողմից սահմանված գնահատման սանդղակները, որոնք, ի թիվս այլնի, ներառում են յուրաքանչյուր չափանիշով դատավորի գործունեության գնահատման ցուցիչները, յուրաքանչյուր ցուցիչով միավորը որոշելու մեթոդը, միավորների առավելագույն չափը, ինչպես նաև տվյալ ցուցիչով դատավորի գործունեության գնահատման հիմք

հանդիսացող փաստաթղթավորված տվյալների շրջանակը և դրանք հավաքելու կարգը:

5. Դատավորի գործունեության գնահատականը ձևավորվում է գնահատման բոլոր չափանիշներով հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից դատավորին նշանակված գնահատականների միջինով:

6. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի դատավոր անդամը չի մասնակցում իր գործունեության գնահատմանը և արդյունքների ամփոփմանը:

Հոդված 140.1. Դատավորների գործունեության գնահատման հետևանքները

1. Գնահատման ընդհանուր արդյունքներով դատավորի գործունեությունը ցածր կամ միջին գնահատվելու դեպքում Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը որոշում է կայացնում դատավորին լրացուցիչ վերապատրաստման ուղարկելու մասին՝ սահմանելով այն չափանիշները, որոնցով նրա հմտությունները կատարելագործվելու անհրաժեշտություն ունեն:

2. Գնահատման ընդհանուր արդյունքներով ցածր կամ միջին գնահատված դատավորի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված լրացուցիչ վերապատրաստումն անցնելուց հետո եռամսյա ժամկետում կազմակերպվում է արտահերթ գնահատում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արտահերթ գնահատման դեպքում սույն օրենսգրքի 138-րդ հոդվածով սահմանված չափանիշների գնահատումն իրականացվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված կարգով:

4. Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի կողմից դատավորի գործունեության գնահատման արդյունքում սույն օրենսգրքի 142-րդ հոդվածով նախատեսված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առերևույթ հիմքեր հայտնաբերելու դեպքում հանձնաժողովը դիմում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար:»:

Հոդված —4045. Օրենքի 142-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա) 1-ին կետից հանել «ակնհայտ և կոպիտ» բառերը, իսկ «խախտումը» բառից հետո լրացնել «, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ.» բառերը.

բ) 2-րդ կետում «կանոնները» բառից հետո հանել «կոպիտ» բառը.

գ) 3-րդ և 4-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Արարքը չի համարվում կարգապահական խախտում, եթե այն, թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով կասկածի տակ չի դնում տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությամբ չի կարող հեղինակազրկել դատական իշխանությունը:»:

3) 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.

4) 5-րդ մասում «իրադրությունում» բառից հետո լրացնել «ակնհայտորեն» բառը.

5) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Էական կարգապահական խախտում է՝

1) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը, որը հանգեցրել է Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և (կամ) ազատությունների հիմնարար խախտման կամ հեղինակազրկում է դատական իշխանությունը.

2) սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված խախտումը, որը դրսևորվել է 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ, 8-9-րդ, 11-12-րդ, 15-16-րդ կետերով և 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ, 7-8-րդ, 13-14-րդ ~~և 18-րդ~~ կետերով նախատեսված դատավորի պարտականությունների խախտմամբ, և պայմանավորված կատարման հանգամանքներով և (կամ) առաջացրած հետևանքներով՝ համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ.

3) երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող դատավորի կողմից կարգապահական խախտում կատարելը:»:

Հոդված 4146. Օրենքի 144-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Հոդված 144. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ հարուցելու ժամկետները

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտման հիմքով՝

Լիազորխախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից խախտումը հայտնաբերելուց հայտնաբերվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում: Սույն կետով նախատեսված հիմքով կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է ութ տարի. բացառությամբ սույն օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված առիթով հարուցվող կարգապահական վարույթի.

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելու հիմքով՝

Լիազորխախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից խախտումը հայտնաբերելուց հայտնաբերվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելուց մեկ տարի հետո՝ բացառությամբ սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտումների.

3) դատավորի կողմից սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելու հիմքով՝ Լիազորխախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից խախտումը հայտնաբերելուց հայտնաբերվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելուց երեք տարի հետո:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը հայտնաբերվել է մինչև տվյալ գործով եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, ապա նույն կետով նախատեսված մեկ տարվա ժամկետը հաշվարկվում է տվյալ ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից, իսկ եթե դատավորի կողմից թույլ են տրվել դատավարական նորմերի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցնում են դատական պաշտպանության իրավունքի խախտման և արդարադատության խաթարման, ապա վարույթ կարող է հարուցվել նաև մինչև տվյալ եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը»:

Հոդված —4247. Օրենքի 145-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել նոր՝ 3-րդ կետ.

«3) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն հոդվածի 1.1.-ին կետով նախատեսված դեպքերում:».

2) լրացնել նոր՝ 1.1.-ին մաս.

«1.1. Սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտման առնչությամբ կարգապահական վարույթ կարող է հարուցել միայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքով սահմանված դեպքերում և կարգով:» պահանջների պահպանմամբ:».

3) 2-րդ մասը «Ժամկետում» բառից հետո լրացնել «սույն օրենսգրքի 147-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով» բառերով:

Հոդված —4348. Օրենքի 146-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել նոր՝ 4-րդ կետ.

«4) վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած

ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը:».

2) 4 -րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Վարույթ հարուցող մարմինը կատարված ուսումնասիրությունների արդյունքում կայացնում է կարգապահական վարույթ հարուցելու ~~կամ չհարուցելու~~ մասին որոշում: կամ չի հարուցում կարգապահական վարույթ

3) ~~5-րդ մասում «չհարուցելու հիմքերը» բառից հետո լրացնել «երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկելով հաղորդում ներկայացրած անձին» բառերը.~~

43) 6-րդ մասում՝

ա. 1-ին կետում «հարուցված» բառից հետո լրացնել «կարգապահական» բառը.

բ. լրացնել նոր՝ 4-րդ կետ.

«4) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են:»:

Հոդված —4449. Օրենքի 147-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «վեց շաբաթից» բառերը փոխարինել «երկու ամսից» բառերով.

2) 3-րդ մասի 4-րդ կետում «անձին» բառից հետո լրացնել «, ֆիզիկական և իրավաբանական անձանց» բառերը, «տեղեկությունների» ~~բառը վերաբերյալ» բառերը~~ փոխարինել «տեղեկություններ և ~~նյութեր~~» բառերով.

3) 6-րդ մասը լրացնել նոր՝ 6-րդ կետով.

«6) առկա է սույն օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմք:»:

4) 9-րդ մասի երկրորդ նախադասությունը «որոշմագրով» բառից հետո լրացնել «կամ դրա անհնարինության դեպքում՝ հասցեատիրոջ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելով, որի դեպքում համարվում են հասցեատիրոջ կողմից ստացված նրա պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվելու պահից» բառերով:

Հոդված —4550. Օրենքի 149-րդ հոդվածում

1) 1-ին մասում լրացնել նոր՝ 3.1-ին և 3.2.-րդ կետեր.

«3.1) առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի հերթական և արտահերթ համալրման ժամանակ ցուցակում ընդգրկվելու արգելք՝ երկուսուկու տարի ժամկետով.

3.2) դատարանի նախագահի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնից ազատում:».

2) լրացնել նոր 1.1-րդ մաս.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 3.2-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը չի կարող կիրառվել սույն օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս:»:

3) 2-րդ մասում «հետևանքները,» բառից հետո լրացնել «դիտավորությունը կամ կոպիտ անփութությունը,» բառերը.

4) 3-րդ մասում «Եթե» բառից հետո լրացնել «առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի հերթական համալրման ժամանակ ցուցակում ընդգրկվելու արգելք կիրառելու կամ, դատարանի նախագահի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնից ազատվելու կամ,» բառերը:

Հոդված —4651. Օրենքի 150-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «մեկամսյա» բառը փոխարինել «եռամսյա» բառով.

2) 2-րդ մասում «մեկ ամսով» բառերը փոխարինել «երեք ամսով» բառերով.

3) լրացնել նոր՝ 3-րդ և 4-րդ մասեր.

«3. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը կասեցվում է, եթե նույն փաստերի առթիվ հարուցվել է քրեական գործ և վերսկսվում է քրեական վարույթի ավարտից հետո:

4. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը Բարձրագույն դատական խորհրդի կողմից կարճվում է, եթե կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը վերսկսելուց հետո առկա են սույն օրենսգրքի 160-րդ հոդվածով նախատեսված դատավորի լիազորությունների դադարման հիմքեր: Քրեական գործով օրինական

ուժի մեջ մտած դատավճիռը կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննելիս պարտադիր է Բարձրագույն դատական խորհրդի համար միայն այն փաստերով, որոնցով հաստատված են որոշակի գործողությունների կատարումը և դրանք կատարած անձինք:»:

Հոդված —4752. Օրենքի 151-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Հոդված 151. Բարձրագույն դատական խորհրդում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացքը

1. Բարձրագույն դատական խորհրդում հարցի քննությունն սկսվում է հարցի էության և կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդության վերաբերյալ վարույթ հարուցած անձի զեկուցմամբ: Եթե դատավորի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցել է Լիազոր մարմինը, ապա վերջինս, — կամ նրա հանձնարարությամբ՝ տեղակալը պարտավոր է ներկա լինել Բարձրագույն դատական խորհրդի նիստին: Եթե կարգապահական վարույթը հարուցվել է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից, ապա Բարձրագույն դատական խորհրդի նիստին կարգապահական խախտման մասին միջնորդությունը զեկուցում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի նախագահը կամ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի նրա հանձնարարությամբ՝ դրա հանձնաժողովի անդամներից մեկը: Եթե կարգապահական վարույթը հարուցվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից, ապա Բարձրագույն դատական խորհրդի նիստին կարգապահական խախտման մասին միջնորդությունը զեկուցում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նրա հանձնարարությամբ՝ դրա հանձնաժողովի անդամներից մեկը:

2. Այն դեպքում, երբ կարգապահական վարույթի նյութերը Բարձրագույն դատական խորհուրդ ուղարկելուց հետո վարույթ հարուցած մարմնին հայտնի են դարձել հանգամանքներ, որոնք բարելավում են դատավորի վիճակը կամ բացառում նրան

կարգապահական պատասխանատվության ենթարկելը, վարույթ հարուցած մարմինը պարտավոր է այդ մասին հայտնել Բարձրագույն դատական խորհրդին:

3. Վարույթ հարուցած մարմնի զեկուցումից հետո Բարձրագույն դատական խորհուրդը լսում է այն դատավորին, որի նկատմամբ վարույթ է հարուցվել կամ նրա փաստաբանին: Բարձրագույն դատական խորհրդի անդամները և վարույթը հարուցած մարմնի ներկայացուցիչը կարող են հարցեր ուղղել դատավորին, որոնց վերջինս կարող է պատասխանել կամ հրաժարվել դրանց պատասխանելուց: Դատավորին կամ նրա փաստաբանին լսելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդը անցնում է վարույթի նյութերի հետազոտմանը:

4. Հարցի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի՝

1) դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ դատավորից, կարգապահական վարույթը հարուցած մարմնից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից (դրանց պաշտոնատար անձանցից), ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջել ներկայացնել հարցի քննության համար նշանակություն ունեցող ապացույցներ, որոնք գտնվում են տվյալ անձանց ազդեցության ոլորտում՝ սահմանելով ժամկետ դրանք Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնելու համար, իսկ որոշումը կամովին չկատարելու դեպքում այն ներկայացնել կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

2) դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ հրավիրել վկաներ,

3) դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ նշանակել փորձաքննություն՝ քննության համար նշանակություն ունեցող հարցերի պարզաբանման նպատակով:

5. Վկաների չներկայանալու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու վկային հարկադրաբար ներկայացնելու վերաբերյալ: Հարկադրաբար ներկայացնելու վերաբերյալ որոշումը կատարվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

6. Բարձրագույն դատական խորհուրդը գործով ցուցմունք տվող անձանց նախազգուշացնում է ցուցմունք տալուց հրաժարվելու կամ սուտ ցուցմունք տալու, իսկ փորձագետին՝ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին:

7. Հարցի քննության համար հրավիրված վկային առաջինը հարցեր է տալիս այն կողմը, որի միջնորդությամբ հրավիրվել է վկան, ապա մյուս կողմը, իսկ վերջում՝ Բարձրագույն դատական խորհուրդի խորհրդի անդամները: Եթե վկան հրավիրվել է Բարձրագույն դատական խորհրդի նախաձեռնությամբ, ապա առաջինը հարցեր է տալիս Բարձրագույն դատական խորհուրդը, այնուհետև կողմերը՝ ըստ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած հերթականության:

8. Վկան իրավունք ունի հրաժարվել ցուցմունք տալ առանձին հարցերի վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրում է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր, իր ամուսնու կամ իր մերձավոր ազգականի դեմ:

9. Վարույթի նյութերի հետազոտումից հետո Բարձրագույն դատական խորհուրդը լսում է նիստին մասնակցող անձանց ամփոփիչ ելույթները, որից հետո հարցի քննությունը հայտարարվում է ավարտված: Հարցի քննությունն ավարտված հայտարարելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդի խորհրդի նիստը նախազգահողը հայտարարում է որոշման հրապարակման օրը, վայրը և ժամը:

10. Հարցի քննությունն ավարտված հայտարարելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդը հեռանում է որոշում կայացնելու:»:

Հոդված — 4853. Օրենքի 155-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը ենթակա է բողոքարկման այն պահից սկսած մեկամսյա ժամկետում, երբ բողոք բերող անձն

(մարմինը) իմացել է կամ կարող էր իմանալ սույն օրենսգրքի 156.1-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապացույցների կամ հանգամանքների մասին:».

2) 8-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված —4954. Օրենքում լրացնել նոր՝ 156.1-ին հոդված.

«Հոդված 156.1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը բողոքարկելը

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ համապատասխանաբար դատավորի կամ կարգապահական վարույթ հարուցած մարմնի բողոքը քննում է Բարձրագույն դատական խորհուրդը, եթե ի հայտ է եկել այնպիսի էական ապացույց կամ հանգամանք, որը բողոքարկողը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով և որը ողջամտորեն կարող էր ազդել որոշման վրա:

2. Բարձրագույն դատարան խորհուրդը բողոքը ստանալուց հետո այն անմիջապես ուղարկում է մյուս կողմին, որը կարող է Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնել բողոքի պատասխան այն ստանալու պահից 10 օրվա ընթացքում:

3. Բարձրագույն դատական խորհուրդը Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ ներկայացված բողոքները քննում և դրանց վերաբերյալ որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ գալիս է եզրահանգման, որ անհրաժեշտ է բողոքի քննությունն իրականացնել նիստում: Բողոքը դատական նիստում քննելու մասին վերաբերյալ կայացվում է որոշում:

4. Բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում կողմերը ծանուցվում են նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ բողոքի քննության համար: Բողոքի քննությունը դատական նիստում

սկսվում է հարցը զեկուցող անդամի զեկուցումով, ով ներկայացնում է բողոքը և բողոքի պատասխանի փաստարկները: Բարձրագույն դատական խորհրդի անդամներն իրավունք ունեն հարցեր տալու զեկուցողին և նիստին ներկայացած կողմերին, որից հետո բողոքի քննությունը հայտարարվում է ավարտված:

5. Բողոքի քննության ժամանակ Բարձրագույն դատական խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

6. Բողոքի քննությունը կատարվում և որոշումը կայացվում է բողոքը ստանալուց հետո երկամսյա ժամկետում:

7. Բողոքի քննության արդյունքներով Բարձրագույն դատական խորհուրդը կայացնում է բողոքարկվող որոշումն անփոփոխ թողնելու կամ որոշումը մասնակի կամ ամբողջությամբ վերացնելու մասին որոշում: Որոշումն ընդունվում է Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:»:

Հոդված — 5055. Օրենքի 159-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում ««18-րդ գլխի»» բառերը փոխարինել ««19-րդ գլխի»» բառերով և հանել ««հարուցման և իրականացման»» բառերը.

2) լրացնել նոր՝ 2.1. մաս.

«2.1. «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով դատավորի լիազորությունները կարող են դադարեցվել՝ հաշվի առնելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացրած եզրակացությունը:»:

Հոդված — 5156. Օրենքի 165-րդ հոդվածում լրացնել նոր՝ 1.1.-ին մաս.

«1.1. Դատավորի նկատմամբ ոչ իր լիազորությունների իրականացման կապակցությամբ քրեական հետապնդում հարուցելու դեպքում Գլխավոր դատախազն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Բարձրագույն դատական խորհրդին:»:

—**Հողված** —**5257**. Օրենքի 166-րդ հոդվածի 27-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հողված —**5358**. **Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն ~~օրենքի օրենքը~~ ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

2. Սույն օրենքի 141-ին, 4-րդ հոդվածները և 5-րդ հոդվածի 4-րդ կետն ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: Մինչև սույն մասում նշված նորմերի ուժի մեջ մտնելը Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության վերաբերյալ գործերի բաշխման կարգը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման դատավորների միջև:

2.3. Սույն օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետը և 3944-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի ձևավորման պահից:

~~3. Սույն օրենքի 26-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ առաջին բողոքը ստանալուց պահից:~~

4. Սույն օրենքի ~~2934-րդ հոդվածի 2-3-րդ կետերի հոդվածը՝~~ հոգեբանական թեստավորման մասով, ուժի մեջ ~~են~~ մտնում հոգեբանական թեստավորման համար Բարձրագույն դատական խորհրդի կողմից հաստատված կարգին համապատասխան ՝ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված անհրաժեշտ պայմանների ստեղծման պահից:

5. Սույն ~~օրենքի պաշտոնական հրապարակումից օրենքն ուժի մեջ մտնելուց~~ հետո եռամսյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը հաստատում է հոգեբանական թեստավորման չափանիշները և անցկացման կարգը:

6. Սույն ~~օրենքի պաշտոնական հրապարակումից օրենքն ուժի մեջ մտնելուց~~ հետո՝ վեց ամսվա ընթացքում ~~Էիագոր—մարմինն~~ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ապահովում է ~~սույն օրենքի 29-րդ հոդվածի~~

2-րդ կետով սահմանված հոգեբանական թեստավորման անցկացման համար անհրաժեշտ պայմանները:

7. Սույն օրենքի պաշտոնական հրապարակումից օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում Ընդհանուր ժողովն ընտրում է Ուսումնական հարցերի և Էթիկայի և կարգապահական հարցերի ~~հանձնաժողովի~~ հանձնաժողովների անդամներին և նույն օրը գործող Ուսումնական հարցերի և Կարգապահական հարցերի ~~հանձնաժողովի~~ հանձնաժողովների լիազորությունները համարվում են դադարած:—

8. Ընդհանուր ժողովը Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի առաջին կազմի համապատասխան երեքական դատավոր անդամներին և մեկ ոչ դատավոր անդամին ընտրում է չորս, իսկ երեքական դատավոր անդամների և մեկ ոչ դատավոր անդամի՝ երեք տարի ժամկետով:

9. Ընդհանուր ժողովի կողմից ընտրվող հանձնաժողովի անդամների պաշտոնավարման ժամկետը որոշվում է ըստ առավելագույն գործակից ստացած թեկնածուների: Սույն օրենքի պաշտոնական հրապարակումից մասով նախատեսված գործակիցը հաշվարկվում է օրենսգրքի 76-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանված կարգով:

8-10. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը հաստատում է ~~Ուսումնական հարցերի և Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի՝ ոչ դատավոր անդամին առաջադրող~~ հասարակական ~~կազմակերպությունների՝ կողմից՝ կազմակերպություններին~~ ներկայացվող պահանջները, նրանց կողմից առաջադրվող թեկնածուների մրցույթի անցկացման և ընտրության անցկացման կարգն ու մանրամասները:

9-11. Սույն օրենքի պաշտոնական հրապարակումից օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում ձևավորվում է Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը, Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանվում են դատավորների գործունեության գնահատման մեթոդաբանությունը, գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը և դատավորների գործունեության գնահատման համար անհրաժեշտ այլ մանրամասները, ինչպես նաև դատավորների

գործունեությունը գնահատելու հերթական ժամանակացույցը՝ ըստ համապատասխան տարիների և դատավորների:

~~10-12.~~ Դատավորների առաջին հերթական գնահատումն իրականացվում է 2020 թվականի ~~հունիսի սեպտեմբերի~~ 1-ից 2024 թվականի ~~հունիսի սեպտեմբերի~~ 1-ն ընկած ժամանակահատվածում:

~~11-13.~~ Սույն ~~օրենքի պաշտոնական հրապարակումից օրենքն ուժի մեջ մտնելուց~~ հետո՝ վեցամսյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է դատավորների աշխատանքային ներքին կարգապահական կանոնները:

~~12-14.~~ Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն ընտրված Բարձրագույն դատական խորհրդի նախագահը շարունակում է պաշտոնավարել մինչև որպես Բարձրագույն դատական խորհրդի նախագահ իր պաշտոնավարման ժամկետի ավարտը:

~~13. Եթե մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դատավորը կամ վարույթ հարուցող մարմինը իմացել է այնպիսի էական ապացույցի կամ հանգամանքի մասին, որը հիմք է Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշումը բողոքարկելու համար, ապա սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից դատավորը կամ վարույթ հարուցող մարմինը կարող է բողոքարկել այդ որոշումը, եթե չի լրացել բողոքարկման համար սահմանված մեկամսյա ժամկետը:~~

~~14-15.~~ Սույն օրենքի՝ կարգապահական պատասխանատվության հիմքերի և վարույթի վերաբերյալ դրույթները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված կարգապահական վարույթների նկատմամբ: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ծագած հիմքերով (խախտումներով) հարուցվող կարգապահական վարույթների հարուցման նկատմամբ կիրառվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ օրենսգրքի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և 144-րդ հոդվածով նախատեսված ժամկետները:

~~15-16.~~ Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր անդամներին, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին և Վճռաբեկ դատարանի նախագահին մակազրված

գործերի վերաբաշխում տեղի չի ունենում, իսկ սույն օրենքով սահմանված նվազեցումները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մակագրված գործերի վրա:

16-17. Սույն օրենքի 2631-րդ հոդվածով նախատեսված 105.1-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանափակումը չի տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար անցկացված գրավոր քննության արդյունքների դատական կարգով բողոքարկման հետ կապված հարաբերությունների վրա:

18. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Ընդհանուր ժողովի գործունեության կարգը համապատասխանեցվում է սույն օրենքին և դրանով սահմանված հանձնաժողովների ընտրության նոր կարգավորումներին:

17-19. Սույն օրենքով լրացվող 21146-րդ հոդվածի 2-1-ին մասի 4-րդ մասը ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: Մինչև տվյալ նորմի կետով նախատեսված առիթով կարգապահական վարույթ կարող է հարուցվել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելը Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության վերաբերյալ գործերի բաշխման կարգը: մտնելուց հետո կայացրած ակտերի հիման վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ (Կ-428-20.12.2019,02.03.2020-ՊԻ-011/1) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N°	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծերի փաթեթ	Առաջարկվող փոփոխությունները՝ ըստ կից ներկայացվող տեղեկանքի	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:
2.	ԱԺ «Իմ քայլը» խմբակցություն				

«ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

<p>1. ԱԺ1-5, 10-12 Դատարանի նախագահի և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների լիազորությունների դադարեցումը առանձին կարգավորել</p> <p>ԱԺ-11</p>	<p>ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ Նախագահի լիազորությունների դադարեցումը կլինի իր՝ որպես դատավորի վարքագծի կանոնների խախտման դեպքում</p> <p>ԸՆԴՈՒՆՎԵԼ Է</p>	<p>ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ</p> <p>ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:</p>
<p>2. ԱԺ-6 Գլխավոր դատախազի տեղակալին չտալ լիազորություն հետապնդում հարուցելու</p>	<p>ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ Նախագծում փոխվել է՝ դատախազի հանձնարարությամբ՝ տեղակալը: Նաև կարգապահական վարույթի հողվածներում է փոխվել. Լիազոր մարմնի ղեկավարի հանձնարարությամբ՝ տեղակալը</p>	<p>ՄԱՍՆԱԿԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ:</p>
<p>3. ԱԺ-7-10 Հայտարարագիր ներկայացնելու և ԿԿՀ-ին նյութեր ու պարզաբանումներ տալու վարքագծի կանոնը առանձին կարգավորել որպես դատավորի պարտականություն և դրա համար առանձին պատասխանատվություն սահմանել</p>	<p>ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ Նման պարագայում շեղում կլինի վարքագծի կանոնի խախտման սկզբունքից</p>	<p>ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ</p>

<p>4. ԱԺ 13-23 Նվերների հետ կապված կարգավորումները վերանայել</p> <p>5. ԱԺ 23-25 խմբագրական փոփոխություններ</p>	<p>ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ Ներկա փուլում նման համակարգային փոփոխություններ անել՝ առանց հանրային քննարկման ընդունելի չէ</p> <p>ԸՆԴՈՒՆՎԵԼ Է</p>	<p>ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p> <p>ԸՆԴՈՒՆՎԵ Լ Է</p>
<p>6. ԱԺ-26 Հանրային ծառայողները չդառնան Ընդհանուր ժողովի հանձնաժողովի անդամներ:</p>	<p>ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ 1. Հանրային ծառայության օրենքով սահմանափակում կա այլ վճարովի գործունեությամբ զբաղվելու 2. Այստեղ որպես պրակտիկ իրավաբան կամ գիտնականներ են ներգրավվում և ի պաշտոնե գործառույթներ չեն անում, հանձնաժողովներն էլ</p>	<p>ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>

	պետական մարմիններ չեն: Վենետիկի հանձնաժողովը այս մասով դիտարկում չունեն	
7. Աժ 27-37 Ընդհանուր ժողովի հանձնաժողովի անդամների թիվը ավելացնել, կարգապահականը՝ 8-ից 11, ուսումնականը՝ 7-ից 9,	Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ Մեծ կազմ ունենալը հիմանվորված չէ հանձնաժողովի առջև դրված խնդիրների ծավալից կամ գործառույթներից ելնելով: Ներկայիս թիվը 8 է, պահել ենք դա: Ավելին՝ առաջարկվող հաշվարկը սխալ էր, իրականում ավելի շատ անդամ է ստացվում եթե բոլոր դատարաններից հաշվում ենք:	Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ
8. Աժ 27-37 Ընդհանուր ժողովի հանձնաժողովի նախագահներին ընտրել դատավորների թվից 9. Աժ 38-39 10. Աժ 41 11. Աժ 42 12. Աժ 43	8. ԸՆԴՈՒՆՎԵԼ է 9. Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ 10. Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ (Հոդվածը հանվել է) 11. ԸՆԴՈՒՆՎԵԼ է 12. Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ	8.ԸՆԴՈՒՆ ՎԵԼ է 9.Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ 10.Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ 11.ԸՆԴՈՒՆ

		<p>ՎԵԼ Է 12.2Ի ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>
<p>13. Աժ 44-48 Դատարանների դեպքում սահմանել որ պարտադիր չէ տվյալ դատարանում փորձառությունը, Վճռաբեկի պալատի դեպքում՝ պարտադիր լինի տվյալ պալատի փորձառությունը</p>	<p>ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ Դատարանի նախագահի դեպքում հանվել է տվյալ դատարանում փորձի պարտադիր պահանջը: Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի մասով առաջարկն ընդունելի չէ, քանի որ անհարկի նեղացնում է թեկնածուների շրջանակը:</p>	<p>ՄԱՍՆԱԿԻ ԸՆԴՈՒՆՈՒ Մ</p>
<p>14. Աժ 49-58 Դատավորների գործունեության գնահատումը կատարի ԲԴԽ-ն:</p>	<p>ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ Նման կարգավորումը կհանգեցնի ԲԴԽ-ին անհարկի ծանրաբեռնմանը, բացի այդ այս փուլում նման մեծածավալ ու կոնցեպտուալ փոփոխություն հնարավոր չէ անել առանց հանրային</p>	<p>ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>

	<p>քննարկման, ներառյալ՝ ԲԴԽ կարծիքի: ԲԴԽ-ն ի վերջո կարգապահական պատասխանատվության հարցն է քննարկելու, այդ թվում՝ Գնահատման հանձնաժողովի վեր հանած արդյունքներով, որոնք էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին են ներկայացվելու:</p>	
<p>15. Աժ 59-69 Կարգապահական խախտման հիմքերը վերանայել</p>	<p>ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ Հստակ տարանջատված են նախագծով, դատական իշխանության հեղինակազրկման հետևանքը առանձին խախտման հետևանք է, հաշվի է առնվել նաև վերջին զարգացումները (ՍԴ որոշում Արայիկ Մելքումյան)</p>	<p>ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>
<p>16. Աժ 70-75 Պալատի նախագահի և վճռաբեկի նախագահի համար</p>	<p>ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ</p>	<p>ՉԻ</p>

առանձին կարգապահական տույժեր	Դատական օրենսգրքով բոլորը դատավոր են	ԸՆԴՈՒՆՎԵԼ
------------------------------	--------------------------------------	-----------

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ		
<p>17. Աժ 83- Նախագծից հանել մրցութային խորհրդին առնչվող դրույթները, Հանձնաժողովի կազմավորման գործող կարգը պահպանել</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ Տվյալ մոտեցումը կառավարության համար ընդունելի չէ մի շարք պատճառաբանություններով: Մասնավորապես, սույն կարգավորումների բացառումը նախագծից մի կողմից հակասելու է ՀՀ-ին ներկայացված հանձնարարականներին, մյուս կողմից ԿԿՀ-ի գործունեության հետագա լեգիտիմության խնդիր է առաջանալու՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ թե՛ Վենետիկի հանձնաժողովը, թե՛ ԳՐԵԿՈ-ն ընդունելի են համարել ԿԿՀ անդամների ուղիղ նշանակումը</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ</p>

	<p>բացառապես առաջին կազմի դեպքում՝ պայմանով, որ ԿԿՀ-ի անկախության ապահովման նպատակով հետագայում մրցութային խորհրդի վերաբերյալ դրույթները կրկին կզետեղվեն նախագծում:</p>	
<p>18. ԱԺ 84- Այս փոփոխությունը, ինչպես նաև օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը հանել, հաշվի առնելով որ 6-րդ կետով հարցը կարգավորված է:</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ 6-րդ կետը Հանրային ծառայության մասին օրենքով նշանակման ենթակա անձանց է վերաբերում, սույն կետը ընտրովի պաշտոններներին է առնչվում և ընտրության ընթացքում է նախատեսվում բարեվարքության ստուգման մեխանիզմը, ուստի միանման կարգավորում նախատեսելը նպատակահարմար չէ:</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ</p>
<p>19. ԱԺ 85- Կատարել նշված փոփոխությունները. «իրավասու մարմնին կամ</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ</p>	<p>Չի</p>

<p>պաշտոնատար անձին ներկայացնում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ և եզրակացություններ (այդ թվում՝ պաշտոն զբաղեցնող անձին օրենքով սահմանված կարգով կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ).»:</p>	<p>Օրենքի 33-րդ հոդվածը սահմանում է հետևյալը. «2. Վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի</p>	<p>ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>
---	---	-----------------------

	<p>առկայության կամ բացակայության մասին:</p> <p>3. Եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում է դիմողին, պաշտոն զբաղեցնող անձին և նրա վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (առկայության դեպքում):</p> <p>4. Պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման մասին եզրակացությունը և այդ առնչությամբ վարույթի բոլոր փաստաթղթերը, նյութերը եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում են պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման</p>	
--	--	--

	<p>հիմքով նրա լիազորությունները դադարեցնելու հարցը քննարկելու (քննելու) իրավասություն ունեցող մարմիններ:</p> <p>5. Այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտման կամ շահերի բախման իրավիճակի առկայության դեպքում Հանձնաժողովն իրավասու մարմին կամ պաշտոնատար անձին առաջարկում է կարգապահական պատասխանատվության ենթարկել պաշտոն զբաղեցնող անձին, եթե նրա արարքում առկա չեն վարչական իրավախախտման կամ հանցագործության (այդ</p>	
--	--	--

	<p>թվում՝ առերևույթ) հատկանիշներ:</p> <p>Հանձնաժողովը կարող է առաջարկել նաև ձեռնարկել խախտման հետևանքների կամ իրավիճակի չեզոքացմանն ուղղված քայլեր:</p> <p>6. Իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է քննարկել Հանձնաժողովի առաջարկը և արդյունքների մասին ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ, քան եզրակացությունն ստանալու պահից 15-օրյա ժամկետում տեղեկացնել Հանձնաժողովին:»:</p> <p>Վերոնշյալից ակնհայտ է, որ Հանձնաժողովն իր եզրակացությամբ չի կարող որոշել պաշտոն</p>	
--	---	--

	<p>զբաղեցնող անձին օրենքով սահմանված կարգով կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ հարցեր: Բացի այդ, տարբեր խախտումների դեպքում տարբեր կառուցակարգեր են, անհամատեղելիության դեպքում առաջարկում է լիազորությունները դադարեցնեն, այլ հիմքերով՝ կարգապահական պատասխանատվության ենթարկեն: Գործող կարգավորումը փոփոխելու անհրաժեշտության կարիք չկա:</p>	
<p>20. ԱԺ 86- «2.1.) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում կարգապահական վարույթ է հարուցում դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ, ինչպես նաև դիմում է Ազգային ժողովի խմբակցություններին՝ «Ազգային ժողովի</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ</p> <p>2-րդ կետում</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ</p>

	<p>նախատեսվում բարեվարքության ստուգման մեխանիզմը, ուստի միանման կարգավորում նախատեսելը նպատակահարմար չէ: Միակ խնդիրը նրանում է, որ 6-րդ կետը ՀԾ օրենքով նշանակման ենթակա անձանց է վերաբերում, սույն կետը ընտրովի պաշտոններ են, ընտրության ընթացքում է նախատեսվում բարեվարքության ստուգման մեխանիզմ:</p>	
<p>22. ԱԺ 88-«Ա 21-րդ կետերով » բառերը հանել:</p>	<p>ԶԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ Տե՛ս նախորդ կետը:</p>	<p>ԶԻ ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>
<p>23. ԱԺ-89 Բանկային պահատուփերում պահվող գույքի վերաբերյալ տեղեկությունները հանել</p>	<p>ԸՆԴՈՒՆՎԵԼ Է Նշվել է, որ պահատուփի առկայության վերաբերյալ է միայն հարցում անելու:</p>	<p>ԸՆԴՈՒՆՎԵ Լ Է:</p>

<p>24. ԱԺ-90 Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրման կարգը սահմանել օրենքով, ոչ թե ԿԲ-ԿԿՀ համատեղ ակտով</p>	<p>ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ</p> <p>Օրենքով սահմանվում է փոխանցման ենթակա տվյալների շրջանակը, ընթացակարգային հարցերն առավել նպատակահարմար է սահմանել կարգով:</p>	<p>ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ</p>
<p>25. ԱԺ 91- «կամ տնօրինվող անշարժ գույքը» բառերը հանել</p>	<p>ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՄԱՍՆԱԿԻ</p> <p>Եթե առաջարկությունը միայն «տնօրինվող» բառին է վերաբերվում հանվել է նախագծից:</p> <p>«անշարժ գույք» բառերը հնարավոր չէ նախագծից հանել, բովանդակությունը կկորի:</p>	<p>ՄԱՍՆԱԿԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ</p>

<p>26. ԱԺ 92, ԱԺ 93 - «109-րդ հոդվածի 4-րդ մասով» և «էական կարգապահական խախտման հիմքով» բառերը հանել նախագծից</p>	<p>Չի ընդհանրվել</p> <p>Կարգապահական վարույթի հիմքերն ու կարգը սահմանված են Դատական օրենսգիրք և սահմանադրական դատարանի մասին սահմանադրական օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերով:</p> <p>Միաժամանակ, տվյալ հոդվածում էական կարգապահական խախտման հիմքը շեշտելը պարտադիր է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բացառապես այդ պարագայում ԿԿՀն</p>	<p>Չի ընդհանրվել</p>
---	--	----------------------

	<p>հնարավորություն ունի հանդես գալու Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու համար ՍԴ դիմելու հարցը քննարկելու առաջարկությամբ:</p>	
<p>27. ԱԺ94, ԱԺ 95- Բարեվարքության ուսումնասիրության փուլում չներառել անձի՝ կարգապահական, վարչական պատասխանատվության ենթարկված լինելու, քրեական ենթամշակույթին հարելու, անձի վերաբերյալ զանգվածային լրատվական միջոցներում, ինչպես նաև սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկությունների ուսումնասիրությունը</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ</p> <p>Որևէ հիմնավորում չկա՝ ինչու է առաջարկվում դրույթները հանել:</p> <p>Բացի այդ, բարեվարքության ուսումնասիրությունն ուղղակիորեն հետևանք չի առաջացնում, այլ թույլ է տալիս թեկնածուի վարքագծի, հասարակական կերպարի վերաբերյալ ընդհանուր</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ</p>

	<p>պատկերացում կազմել և դրա արդյունքում կազմել խորհրդատվական եզրակացություն:</p> <p>Միաժամանակ, նշյալ կետերը համահունչ են միջազգային փորձին, այն է՝ Ուկրաինայի, Լիտվայի, Լատվիայի բարեվարքության ստուգման կարգավորումներին:</p>	
<p>28. ԱԺ 96- «միջազգային» բառը հանել նախագծից</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ</p> <p>Տվյալ դրույթի հիմքում դրված տրամաբանությունը կայանում է նրանում, որ բարեվարքության ուսումնասիրությանը հնարավորություն տրվի</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ</p>

	<p>մասնակցելու այլ երկրներում նմանատիպ գործընթացներում փորձառություն ունեցող, գործում չշահագրգռված միջազգային փորձագետներին:</p>	
<p>29. ԱԺ 97- Հանել հետևյալ դրույթը «Հայտարարագրերի վերլուծության վերաբերյալ սույն օրենքով սահմանված դրույթները կիրառելի են նաև 2017 թվականի հուլիսի 1-ից ներկայացված կամ ներկայացման ենթակա հայտարարագրերի նկատմամբ»</p>	<p>ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ</p> <p>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտարարագրման նորմերի խախտման համար պատասխանատվության սահմանման դրույթներն ուժի մեջ են մտել 2017 թվականի հուլիսի 1-ից՝</p>	<p>ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ</p>

	<p>նպատակահարմար է հայտարարագրերի վերլուծության վերաբերյալ նոր ներդրվող կարգավորումները կիրառել 2017 թվականի հուլիսի 1-ից ներկայացված կամ ներկայացման ենթակա հայտարարագրերի նկատմամբ:</p>	
<p>«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ</p>		
<p>30. ԱԺ 98 - Նվերների վերաբերյալ դրույթները փոփոխել. Ընդունելի լինելու դեպքում, իրացնել ԴՕ 73-րդ հոդվածի վերաբերյալ ներկայացված առաջարկները:</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ Այս փուլում, առանց շահագրգիռների հետ քննարկման և համաձայնեցման նվերների ինստիտուտին վերաբերող կոնցեպտուալ փոփոխություններ կատարելը</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ</p>

	նպատակահարմար չէ: Առաջարկվում է հարցին անդրադառնալ հետագայում:	
31. ԱԺ 99- Իրավիճակային հայտարարագրի վերաբերյալ կարգավորումները հանել և այս փուլում ձեռնպահ մնալ դրանք գործարկելուց, հաշվի առնելով որ Կոռուպցիայի կանխարգելման համակարգը դեռևս լիարժեքորեն և չի գործում	ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ Պարզ չէ, թե ինչ է նշանակում «կոռուպցիայի կանխարգելման համակարգը լիարժեք չէ»: Հայտարարագրման արդյունավետության տեսանկյունից կարևոր ինստիտուտ է, հանելը նպատակահարմար չէ:	ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵ Լ
32. ԱԺ 100 -9-րդ և 10-րդ մասերը, այն է՝ ընտանիքի կազմն ընդլայնող և ռեզիդենտությանն առնչվող դրույթները հանել, կազմը թողնել անփոփոխ	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է Առաջարկն ընդունվել է՝ այսօր, որ իրավիճակային հայտարարագրի վերաբերյալ դրույթները մնան նախագծում,	ԸՆԴՈՒՆՎԵ Լ Է

	այլապես հայտարարագրման համակարգում այս պահին առկա խնդիրները չեն լուծվի:	
33. Աժ 101- կանխիկ դրամի սահմանափակման դրույթը թողնել անփոփոխ	Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ Առաջարկը հիմնավորված չէ: Նշյալ ինստիտուտը կանխիկի շարժի նկատմամբ հսկողություն իրականացնելու երաշխիք է:	Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»		
34. Աժ 102-106 Համապատասխան փոփոխություններ Դատական օրենսգրքի համանմանությամբ	Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ վերը նշված մեկնաբանությունների լույսի ներքո	Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ
35. Աժ 107- «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի լիազորություններն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է

<p>դադարեցնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը խմբակցությունը ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկության հիման վրա» նախադասությունը հանել, քանի որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը նույնպես ինքնավար մարմին է:</p>		
<p>«ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ</p>		
<p>36. ԿՀ 108- Կարծում ենք, որ այս մասին ըստ էության համապատասխանեցված չէ «Բանկային գաղտնիքի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին և ըստ այդմ՝ նույն օրենքի 8-րդ հոդվածին, քանի որ նշված նորմերի տրամաբանությամբ՝ այդ օրենքում և «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքում պետք է սահմանել բանկային գաղտնիքի տրամադրման, պահպանման և հանձնաժողովի իրավասության շրջանակներում օգտագործման հստակ կարգ (տես՝ օրինակ 10-րդ և 11-րդ հոդվածներ):</p> <p>Պարզ չէ նաև, թե բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն օգտագործելու դեպքում, հանձնաժողովը ինչպես է ապահովելու բանկային գաղտնիքը չհրապարակելու պահանջը:</p>	<p>ԸՆԴՈՒՆՎԵԼ է ՄԱՍՆԱԿԻ Հայտարարագրման գործընթացում բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությանը հասանելիություն չունենալը խոչընդոտում է հայտարարագրման համակարգի արդյունավետությանը: Այս առումով, Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պետությունների խումբը(ԳՐԵԿՈ) 2015</p>	<p>ՄԱՍՆԱԿԻ ԸՆԴՈՒՆՈՒ Մ</p>

	<p>թվականի 4-րդ փուլի զեկույցում նշել է, որ հայտարարագրման ինստիտուտի կայացման և արդյունավետության առումով անհրաժեշտ է, որպեսզի Հանձնաժողովը հասանելիություն ունենա տվյալների բազաներին, այդ թվում՝ առաջարկել է դիտարկել Հանձնաժողովին բանկերից և այլ ֆինանսական հաստատություններից համապատասխան ֆինանսական տեղեկատվություն պահանջելու իրավասության տրամադրման հարցը: (ԳՐԵԿՈ 4-րդ փուլի զեկույց, 2015 թ., կետ 231)</p> <p>Միաժամանակ, բանկային</p>	
--	--	--

	<p>գաղտնիք ստանալու վերաբերյալ դրույթները, այն է շրջանակը, ծավալը՝ ԿԿՀ օրենքում հստակ սահմանվում են: Առաջարկում հղում արած հոդվածների կարգավորման առարկան և բնույթն այլ է: Որպես լրացուցիչ երաշխիք նախագծում նախատեսվել, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը կարող է փոխանցվել է Կենտրոնական բանկի միջոցով՝ ԿԲ և ԿԿՀ համատեղ ակտով սահմանված փոխանցման կարգով:</p> <p>Այդուհանդերձ, բանկային գաղտնիքին առնչվող դրույթները նախագծում</p>	
--	---	--

				հստակեցվել են:	
3	ԱԺ «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 22, 27	1. Առաջարկվել է որպես դատավորի թեկնածուին ներկայացվող պահանջներ՝ 1) սահմանել 30 տարեկանը և 2) հանել օտար լեզուների իմացության պահանջը:	Չի ընդունվել: Դատավորների թեկնածուների տարիքի իջեցումը նախագծով թույլ կտա դատական համակարգ ներգրավել երիտասարդ, կասկածելի կամ վարկաբեկող կապեր չունեցող, համակարգի այլ ներկայացուցիչների հետ կախվածության կամ կապվածության մեջ չգտնվող անձանց: Ի լրումն, արհեստավարժությունը ուղղակիորեն կախված չէ տարիքից, այն պայմանավորված է մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմամբ, իրավագիտության բնագավառում	Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ

				<p>Ժամանակակից զարգացումների և առաջադեմ միջազգային փորձի յուրացմամբ և այլն: Այդ պատճառով դատավորի նվազագույն տարիքային շեմ ոչ միայն սահմանված չէ միջազգային մասնագիտացված կառույցների կողմից, այլև մի շարք երկրներում նման շեմ ընդհանրապես օրենքով սահմանված չէ: Ինչ վերաբերում է օտար լեզուների իմացությանը, ապա պահանջը փոխարինվել է մեկ լեզվի իմացության պահանջով, եթե այդ լեզուն ռուսերենը չէ, իսկ եթե այդ լեզուն ռուսերենն է, ապա հավակնորդը պարտավորվում է մինչև Արդարադատության ակադեմիայում ուսուցման ավարտը ներկայացնել այլ լեզվի իմացության</p>	
--	--	--	--	---	--

				<p>վերաբերյալ համապատասխան ապացույցը, հակառակ դեպքում նա չի ներառվում դատավորների թեկնածուների ցուցակում: Սակայն օտար լեզուների պահանջի լրիվ վերացումը ընդունելի չի համարվում հետևյալ պատճառաբանությամբ:</p> <p>Դատավորի՝ որպես դատական իշխանության կրողի և արդարադատություն իրականացնողի բարձր կոչմանը հավակնողների համար նման պահանջի ամրագրումն արդարացված է՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության՝ միջազգային տարբեր կառույցների անդամ լինելու, դրանց տարբեր մարմինների կողմից ընդունվող ակտերին, այդ թվում՝ Մարդու</p>	
--	--	--	--	---	--

				<p>իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերին և այլ անհրաժեշտ փաստաթղթերին այդ կառույցների պաշտոնական լեզուներով ծանոթանալու և դրանցից օգտվելու հնարավորություն ունենալու, միջազգային զարգացումներին հետևելու, այլալեզու գործընկերների հետ շփումների, միջազգային հարթակներում սեփական փորձը և ձեռքբերումները ներկայացնելու, այլոց փորձին ծանոթանալու, ինչպես նաև ինքնակրթությամբ</p>	
--	--	--	--	---	--

				զբաղվելու տեսանկյուններից:	
			Առաջարկվել է #բատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ներառվելու համար իրավաբան գիտնականների համար սահմանել վերջին 10 տարիների ընթացքում առնվազն հինգ տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում իրավունք դասավանդած կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարելու պահանջ:	Ընդունվել է:	ԸՆԴՈՒՆՎԵ Լ է
	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծ, հոդված 1	2. Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 37-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «7. Սույն օրենսգրքի 169.28-րդ	Չի ընդունվել: Առաջարկի ներկայացման որևէ հիմնավորում կցված չէ: Միաժամանակ, գործող կարգավորումը սահմանում է առ այն, որ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով /Հայտարարագրերը հանձնաժողով սահմանված ժամկետներում	Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ	

			<p>հողվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը հայտնաբերվելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:»:</p>	<p><i>չներկայացնելը կամ հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելը կամ հայտարարագրերում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը/</i></p> <p>նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը հայտնաբերվելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Վերոնշյալից բխում է, որ առաջարկվում է գրեթե անփոփոխ թողնել գործող նորմը՝ «հայտնաբերվելուց հետո՝ երկու ամսվա</p>	
--	--	--	--	--	--

				<p>ընթացքում» բառերը փոխարինելով «հայտնաբերվելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում» բառերով:</p> <p>1-ին ընթերցմամբ ընդունված նախագծով առաջարկվում է առհասարակ հանել հայտնաբերման հետ կապված ժամկետը, քանի որ գործնականում գործող նորմը կիրառելիության առումով լուրջ խնդիրներ է առաջացնում:</p> <p>Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտարարատու անձինք հայտարարագիր են ներկայացնում տարեկան կտրվածքով (բացառությամբ պաշտոնի ստանձնման և պաշտոնեական պարտականությունների դադարեցման հայտարարագրի)՝ առավել</p>	
--	--	--	--	---	--

				<p>նպատակահարմար է տույժ նշանակելը պայմանավորել իրավախախտումը կատարելու հանգամանքով և տույժ նշանակելու ժամանակահատվածը համապատասխանեցնել հայտարարագիր ներկայացնելու համար սահմանված հաշվետու ժամանակահատվածին:</p>	
	Նախագծերի փաթեթ	<p>3. Նախագծերի փաթեթից հանել «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը: Առաջարկը կապված է նախագահի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին և «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու</p>	<p>Չի ընդունվել:</p> <p>1. Նախ, տվյալ նախագծի բանկային գաղտնիքի վերաբերյալ կարգավորումները էապես տարբերվում են նշյալ նախագծերի կարգավորման առարկայից:</p> <p>2. Բացի այդ, չնայած այն հանգամանքին, որ նախագծերը ներկայացվել են Սահմանադրական դատարան՝ դրանց</p>	<p>Չի ընդունվել</p>	

			<p>մասին» ՀՀ օրենքները չստորագրելու և դրանց սահմանադրականությունը որոշելու հարցով ՀՀ ՍԴ դիմելու հետ: Դրանով պայմանավորված, գտնում ենք, որ անհրաժեշտ է այս փուլում ձեռնպահ մնալ սույն նախագծերն ընդունելուց:</p>	<p>սահմանադրականությունը որոշելու նպատակով՝ նախագծերը հակասահմանադրական չեն ճանաչվել:</p> <p>3. Միաժամանակ, հայտարարագրման գործընթացում բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությանը հասանելիություն չունենալը խոչընդոտում է հայտարարագրման համակարգի արդյունավետությանը: Այս առումով, Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պետությունների խումբը(ԳՐԵԿՈ) 2015 թվականի 4-րդ փուլի զեկույցում նշել է, որ հայտարարագրման ինստիտուտի կայացման և արդյունավետության</p>	
--	--	--	---	--	--

				<p>առումով անհրաժեշտ է, որպեսզի Հանձնաժողովը հասանելիություն ունենա տվյալների բազաներին, այդ թվում՝ առաջարկել է դիտարկել Հանձնաժողովին բանկերից և այլ ֆինանսական հաստատություններից համապատասխան ֆինանսական տեղեկատվություն պահանջելու իրավասության տրամադրման հարցը: (ԳՐԵԿՈ 4-րդ փուլի զեկույց, 2015 թ., կետ 231)</p> <p>2019 թվականի զեկույցում ԳՐԵԿՈ-ն ընդգծել է, որ հայտարարագրերի ստուգման նպատակով ԿԿՀ-ին անհրաժեշտ է լիազորություն տրամադրել ստանալու</p>	
--	--	--	--	--	--

				<p> հասանելիություն անհրաժեշտ ֆինանսական տվյալներին՝ անձնական տվյալների պաշտպանության և համաչափության երաշխավորմամբ: Այսպես, Բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն կարող է տրամադրվել, եթե սահմանված է օրենքով (ԳՐԵԿՈ 4-րդ փուլի 2-րդ համապատասխանության զեկույց, 2019թ, կետ 85) Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների՝ կոռուպցիայի կանխարգելման մարմիններին հասանելիության մոդելը գործում է տարբեր երկրներում: Մասնավորապես, Բուլղարիայում հայտարարագրերի և գույքի կարգավիճակի ստուգման համար Հակակոռուպցիոն </p>	
--	--	--	--	--	--

				<p>հանձնաժողովը կարող է պահանջել և ստանալ վարկային տեղեկատվություն և բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ: Բուլղարիայի Ազգային բանկը ստեղծում և պահպանում է հաճախորդների դրամական պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվական համակարգ, որը հասանելի է inter alia Կոռուպցիայի դեմ պայքարի և ապօրինի ձեռք բերված ակտիվների բռնագանձման հանձնաժողովին՝ որոշ բացառություններով: Էստոնիայում բանկերը և վարկային կազմակերպությունները ի պատասխան գրավոր հարցման Տնտեսական շահերի հայտարարագրման</p>	
--	--	--	--	---	--

				<p>դեպոզիտարիային պետք է տրամադրեն Կոռուպցիայի դեմ պայքարի օրենքում նշված անձի մասին բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկություն՝ տնտեսական շահերի հայտարարագրում նշված տեղեկությունները ճշտելու համար, եթե առկա է կոռուպցիայի կասկած: Նման կարգավորումներ են նախատեսված նաև Իսպանիայում և Պորտուգալիայում, երբ կասկածներ կան պաշտոնատար անձանց կոռուպցիայի մասին: Միաժամանակ, կարևոր երաշխիք է ԿԲ և ԿԿՀ համատեղ ակտով բանկային գաղտնիք կազմող տվյալների փոխանցման կարգի սահմանումը: Այդուհանդերձ, բանկային և ապահովագրական</p>	
--	--	--	--	--	--

				գաղտնիքին առնչվող դրույթները նախագծում հստակեցվել են:	
4	ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին սահմանադրական օրենքի նախագիծ	1. Նախագծի 1-ին հոդվածի վերաբերյալ նշենք, որ բավականին խնդրահարույց է այն միտքը, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման միջնորդությունները քննվում են միայն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից: Ստացվում է, որ այդ միջնորդություններն ամբողջ Հանրապետության տարածքում քննվելու են միայն մայրաքաղաքի դատարանի կողմից, դեռ ավելին՝ քրեական գործերով մասնագիտացման են համարվում միայն Շենգավիթի, Կենտրոնի և Ավանի նստավայրերը: Բանն այն է, որ մի շարք փոփոխություններ ուղղված են հենց նրան, որ քաղաքացիական	Չի ընդունվել: Դատավորների ծանրաբեռնվածության հանգեցնելու ռիսկ առկա է, քանի որ դատավորների թիվը ընդլայնվելու է Երևան քաղաքի քրեական մասնագիտացման դատավորների քանակով՝ դառնալով 25	Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ

			<p>մասնագիտացման դատավորները չքննեն օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման միջնորդությունները: Առանց վիճակագրական տվյալների առկայության էլ դժվար չէ պատկերացնել, թե ինչ ծանրաբեռնվածություն է սպասվելու վերը նշված 3 նստավայրերին, որոնք պետք է քննեն Հանրապետության ամբողջ տարածքից ներկայացվող միջնորդությունները: Ընդ որում, դա հավելյալ և չհիմնավորված բեռ է նաև նման միջնորդություն ներկայացնելու իրավասություն ունեցող մարզային մարմինների համար: Ուստի առաջարկում ենք հրաժարվել այն գաղափարից, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման միջնորդությունները պետք է քննվեն միայն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի</p>		
--	--	--	---	--	--

			կողմից:		
			<p>2. Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվում է Օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը հանել, ինչի արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդը (այսուհետ՝ «ԲԴԽ») զրկվում է մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացված միջնորդությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների բաշխման, վերաբաշխման առանձնահատկությունները, ինչպես նաև դրանք քննող դատավորների ցանկը սահմանելու իրավասությունից: Կարծում ենք, որ ամեն դեպքում հաշվի առնելով դատարանների և դատավորների ծանրաբեռնվածությունը՝ ԲԴԽ-ն առնվազն պետք է ունենա այդպիսի</p>	<p>Չի ընդունվել: Այդ մասից հանվել է կոնկրետ դատավորներին տալու մասին դրույթը, սակայն պահպանվել է Երևան քաղաքի քրեական մասնագիտացման դատավորների միջև բաշխման կարգ նապատեսելու հնարավորությունը հնարավորությունը, քանի որ մարզերից եկած գործերի բաշխման կարգ է պետք, և անցումային դրույթում սահմանվել է՝ Սույն օրենքի 1-ին, 4-րդ հոդվածները և 5-րդ հոդվածի 4-րդ կետն ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: Մինչև սույն մասում նշված նորմերի ուժի մեջ մտնելը Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է օպերատիվ-</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>

			<p>միջնորդություններ քննող առանձին դատավորների ցանկ սահմանելու կամ մի դատավորի մոտ կուտակված միջնորդությունների վերաբաշխման իրավասություն: Ենթադրվում է, որ փոփոխության նպատակը քաղաքացիական մասնագիտացման դատավորների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման միջնորդությունների քննումը բացառելն է: Սակայն չպետք է հարցին մոտենալ այն կանխավարկածով, որ ԲԴԽ-ն հնարավոր է հաշվի չառնի դատավորների մասնագիտական և մասնագիտացման առանձնահատկությունները: Ուստի առաջարկում ենք գործող կարգավորումը չհանել Օրենսգրքից:</p>	<p>հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության վերաբերյալ գործերի բաշխման կարգը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման դատավորների միջև:</p>	
			<p>3. Նախագծի 5-րդ հոդվածով նախատեսվում է Օրենսգրքի 45-րդ հոդվածի վերնագրից հանել «և օպերատիվ-հետախուզական</p>	<p>Չի ընդունվել: Այժմ դրույթը չի փոխվել, քանի որ Երևանի ընդհանուր իրավասության</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>

			<p>միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորներին» բառերը: Այս փոփոխությունն անտրամաբանական է թվում, քանի որ նույն հոդվածի 3-րդ մասը այդպիսի միջնորդություններ քննող դատավորների համար նախատեսում է հավասարաչափ բաշխման չափանիշներից նվազնեցման տոկոսաչափ սահմանելու հնարավորություն: Ուստի վերնագրում հոդվածի բովանդակության մեջ առկա դրույթների վերաբերյալ նշում պարունակելը, գտնում ենք, խնդիր չի առաջացնում:</p> <p>Կարծում ենք նաև, որ Վճռաբեկ դատարանի նախագահի համար 60%-ի չափով նվազեցում նախատեսելը ողջամիտ չէ՝ հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի նախագահի առանձնահատուկ լիազորությունների</p>	<p>դատարանի դատավորները քննում են օպերատիվ հետախուզական միջոցառումների վերաբերյալ գործերը և նրանց կարող է ծանրաբեռնվածությունը մարզից տարբեր լինել: Վճռաբեկ դատարանի նախագահի մասով էական առանձնահատկություն կա, նա որոշում է բոլոր ընդդատության վեճերը, իրականացնում է ներկայացուցչական լիազորություններ և այլն:</p>	
--	--	--	--	---	--

			<p>բացակայությունը, ինչպես նաև ստորադաս դատարանների դատավորների համեմատությամբ ոչ շատ ծանրաբեռնվածությունը: Ուստի առաջարկում ենք Վճռաբեկ դատարանի նախագահի համար սահմանված նվազեցման տոկոսի չափը թողնել անփոփոխ կամ առնվազն դարձնել այդ թիվը 40 տոկոս:</p>		
			<p>4. Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվում է Օրենսգրքի 51-րդ հոդվածի 6-րդ մասում կատարել լրացում, ըստ որի՝ դատավորի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման և տվյալ գործով մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելու հնարավորություն կտրվի նաև գլխավոր դատախազի տեղակալին: Կարծում ենք, որ այդ դրույթի նախատեսումն իրավաչափ չէ, քանի որ միայն գլխավոր դատախազին</p>	<p>Չի ընդունվել: Տեղակալի մասնակցությունը չի կարող նսեմացնել դատական իշխանության հեղինակությունը, քանի որ օբյեկտիվորեն կան դեպքեր, երբ գլխավոր դատախազը չի կարող մասնակցել նիստերին: Այդ պատճառով նախագծի լրամշակված տարբերակում լրացվել է <նրա հանձնարարությամբ տեղակալը> բառերը: Բացի այդ, դատավարության</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>

			<p>նման իրավասություն վերապահելը պայմանավորված է դատավորի կարգավիճակի առանձնահատկությամբ և դատավորի անձեռնմխելիության լրացուցիչ երաշխիքի սահմանման անհրաժեշտությամբ : Ուստի առաջարկում ենք հրաժարվել նման կարգավորման նախատեսումից:</p>	<p>օրենսդրությամբ ևս կան բազմաթիվ դեպքեր, երբ որոշակի կարևոր նշանակության գործառույթներ գլխավոր դատախազից բացի տրվել են նաև նրա տեղակալին, մասնավորապես օրինակ՝ Վճռաբեկ բողոքարկման իրավունքը գլխավոր դատախազի կամ նրա տեղակալների կողմից կամ նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման համար դիմելու իրավունքը:</p>	
			<p>5. Նախագծի 7-րդ հոդվածով նախատեսվում է Օրենսգրքի 53-րդ հոդվածում կատարել փոփոխություններ, որոնց արդյունքում դատավորը, որը քրեական հետապնդման չի ենթարկվում, հնարավորություն չի ունենա նախապես տեղեկանալու իր մասնակցությամբ բոլոր քննչական</p>	<p>Չի ընդունվել: Դատարանի կողմից տրված թույլտվության հիման վրա իրականացվող քննչական գործողությունների՝ խուզարկություն, առգրավում և այլն, արդյունավետությունն է բարձրացվում, քանի որ եթե նախապես սուբյեկտը</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>

			<p>գործողությունների անցկացման մասին: Նախատեսվող փոփոխության անհրաժեշտությունն ընդհանրապես անհասկանալի է՝ հաշվի առնելով, որ եթե դատավորը քրեական հետապնդման չի ենթարկվում, չկա նախաքննության շահերի ապահովման կամ գաղտնիության պահպանման անհրաժեշտություն: Դեռ ավելին, դատավորին իր մասնակցությամբ քննչական գործողությունների անցկացման մասին նախապես տեղեկացնելը պարտադիր է՝ հաշվի առնելով ներկայումս դատավորների ծանրաբեռնվածությունը: Առաջարկում ենք գործող կարգավորումը թողնել նույնը:</p>	<p>ծանուցվում ապա քննչական գործողության արդյունավետությունը կարող է տուժել: Դատարանի կողմից քանի որ արդեն իսկ քննվել է, ապա հեղինակության նվազեցում առկա չէ:</p>	
			<p>6. Նախագծի 8-րդ հոդվածով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը, ինչի արդյունքում բացառվում է դատավորի վարքագծի կանոնների</p>	<p>Չի ընդունվել: Դրույթը հանվել է Վենետիկի հանձնաժողովի դիտարկումների համաձայն, ըստ որի՝ վարույթ հարուցողը և կանոնի վերաբերյալ</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>

			<p>վերաբերյալ խորհրդատվական մեկնաբանությունների տրամադրումը: Դրա նպատակն անհասկանալի է, քանի որ այդպիսի մեկնաբանությունների առկայությունն ունի միայն դրական նշանակություն և կոչված է նպաստելու այդ վարքագծի կանոնների հասցեատերերի կողմից այդ կանոնների պահպանմանը: Ուստի առաջարկում ենք գործող կարգավորումը թողնել անփոփոխ:</p>	<p>մեկնաբանություն տվողը չեն կարող նույն սուբյեկտը լինել:</p>	
			<p>7. Նախագծի 9-րդ հոդվածով նախատեսվում է Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասում ավելացնել նոր 15-րդ և 16-րդ կետեր: Դրանցով նախատեսվում է դատավորի վարքագծի կանոնների թվում ավելացնել այնպիսի պարտավորություններ, որոնք այլ օրենքներով արդեն իսկ սահմանված են: Ստացվում է, որ այդ լրացումներն օրենսդրության մեջ ստեղծում են անհարկի</p>	<p>Չի ընդունվել: Կարծում ենք կարող են համարվել վարքագծի կանոններ և չեն հակասում Բանգալորյան սկզբունքներին: Գործող օրենսգիրքը նույնպես Բանգալորյան սկզբունքների շրջանակից ավել մի շարք վարքագծի կանոններ է սահմանում, օրինակ՝ նվերներ ընդունելու արգելքը: Ավելին՝ Բանգալորյան</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>

			<p>կրկնություն: Մյուս կողմից, դատավորի վարքագծի կանոններն ընդհանուր առմամբ ամբողջացնում են օրինակելի դատավորի կերպարը և նրա վարքագիծն իր լիազորություններն իրացնելիս: Իսկ այդ կանոնների հիմքում, ինչպես շատ երկրների օրենսդրության մեջ, ընկած են դատավորների վարքագծի Բանգալորյան սկզբունքները, որտեղ նման պարտավորությունները չեն դիտվում որպես վարքագծի կանոններ: Ուստի առաջարկում ենք բացառել այդ նորմերի նախատեսումը որպես դատավորի վարքագծի կանոններ կամ առնվազն այդ դրույթները նախատեսել Օրենսգրքի այլ հոդված(ներ)ում:</p>	<p>սկզբունքները իրենք են հենց շեշտում, որ դրանք ուղղված են դատավորի հաշվետվողականությանը, տե՛ս սկզբունքների նախաբան https://www.unodc.org/pdf/crime/corruption/judicial_group/Bangalore_principles.pdf</p>	
			<p>8. Նախագծի 10-րդ հոդվածով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել 70-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ և 11-րդ կետերը: Նախ 11-րդ</p>	<p>Ընդունվել է Չի ընդունվել, երկրորդ ընթերցման առաջարկվող</p>	<p>ԸՆԴՈՒՆՎԵ Լ Է Չի</p>

			<p>կետն արդեն իսկ ուժը կորցրած է ճանաչվել: Իսկ ինչ վերաբերում է 10-րդ կետին, ապա կարծում ենք, որ նման մոտեցումը սխալ է, քանի որ պատշաճ մասնագիտական պատրաստվածության ու հմտությունների շարունակական կատարելագործման ապահովումը հանդիսանում է Բանգալորյան սկզբունքներից որակավորում և ջանասիրություն սկզբունքի դրսևորում: Ուստի առաջարկում ենք հրաժարվել 10-րդ կետն ուժը կորցրած ճանաչելու գաղափարից: Նույն հոդվածի 14-րդ կետը նախատեսվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «զերծ մնալ այնպիսի գործողություններ ձեռնարկելուց, որոնք նպատակ են հետապնդում ստեղծել ինքնաբացարկի հիմքեր»: Գտնում ենք, որ ներկայիս ձևակերպումն ավելի հավասարակշռված է և առաջարկում թողնել այն գործող</p>	<p>տարբերակը փոփոխվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>որոշակի</p>	<p>ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p> <p>ԸՆԴՈՒՆՎԵ Լ է</p>
--	--	--	--	--	-----------------------	---

			<p>տեսքով:</p> <p>Նախատեսվում է նույն հոդվածում ավելացնել նոր 18-րդ կետ, ըստ որի՝ «ինքնաբացարկի հիմքերի առկայության դեպքում դրանք բացահայտել կողմերին, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով հայտնել ինքնաբացարկ»:</p> <p>Կարծում ենք, որ նման դրույթի նախատեսումը ևս ստեղծում է անհարկի կրկնություն, քանի որ այդպիսի պարտավորություն դատավորի համար սահմանված է Օրենսգրքի 71-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև դատավարական օրենսգրքերով:</p>		
			<p>9. Նախագծի 11-րդ հոդվածով նախատեսվում է Օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասից հանել «եթե ողջամտորեն կարող է ընկալվել, որ այն կապված է իր պաշտոնեական</p>	<p>Չի ընդունվել:</p> <p>Նույն հոդվածի երկրորդ մասը ասումը սահմանում է թե ինչ է նվերը. «նվեր» հասկացությունը ենթադրում է ցանկացած</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>

			<p>պարտականություններն իրականացնելու հետ» բառերը: Կարծում ենք, որ այս գաղափարն անհարկի սահմանափակում է դատավորի կողմից սեփական անկաշկանդ կյանքով ապրելու հնարավորությունը: Բանն այն է, որ նախատեսվող փոփոխությամբ դատավորին կարգելի նվերներ ընդունել ընդհանրապես: Սա, մեղմ ասած, անտրամաբանական է, քանի որ բնական է, որ ոչ բոլոր նվերները դատավորին կարող են կախվածության մեջ գցել կամ նրա համար պարտավորվածություն առաջացնել: Ուստի առաջարկում ենք հրաժարվել նման ոչ իրավաչափ կարգավորում նախատեսելու գաղափարից: Նույնը վերաբերում է նաև այլ հանրային ծառայողների մասով այս նույն սահմանափակումը նախատեսելուն:</p>	<p>գույքային առավելություն, որը ողջամտորեն չէր տրամադրվի դատավոր չհանդիսացող այլ անձի: Այս հասկացությամբ փարատվում են բոլոր մտահոգությունները: Մյուս կողմից, «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է «նվեր» հասկացությունը: Մասնավորապես, նշյալ հոդվածի համաձայն՝ «նվեր» հասկացությունը ենթադրում է ցանկացած գույքային առավելություն, որը ողջամտորեն չէր տրամադրվի պաշտոն չգրադեցնող անձի: Վերոնշյալից ուղղակիորեն բխում է, որ օրենսդիրը «նվեր» հասկացությունն ուղղակիորեն պայմանավորում է անձի կողմից պաշտոն</p>	
--	--	--	---	--	--

				<p>զբաղեցնելու հանգամանքով: Ինչ վերաբերում է վերոնշյալ հոդվածի 1-ին մասի կարգավորմանը, ապա գործող կարգավորումը սահմանում է, որ Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չպետք է ընդունեն նվեր կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տան, եթե ողջամտորեն կարող է ընկալվել, որ այն կապված է պաշտոնետական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ : Նշված իրավակարգավորումների համադրումից հետևում է, որ անձի՝ պաշտոն զբաղեցնելու հանգամանքով ցանկացած գույքային առավելության</p>	
--	--	--	--	---	--

				<p>տրամադրումն ինքնին ավելի լայն է և կլանում է անձի պաշտոնական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված առավելության ստացումը: Ուստի, հասկացությունների տարրնկալումից խուսափելու նպատակով առաջարկվում է «պաշտոնական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված» բառերը հանել նախագծից:</p>	
			<p>10. Նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ կետով առաջարկվում է էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմում ընդգրկել հասարակական կազմակերպությունների կողմից առաջադրվող 2 իրավաբան գիտնական, ինչը բացարձակապես</p>	<p>Չի ընդունվել Վենետիկի հանձնաժողովը նույնպես իր եզրակացությամբ ընդգծել է որ դատավորների շրջանակներից դուրս այլ անձի ներգրավումը կօգնի կորպորատիվիզմի կանոնի հաղթահարմանը և որոշումների կայացման</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>

			անընդունելի ենք համարում և առաջարկում հանել այս կարգավորումները Նախագծից:	թափանցիկության ավելացմանը: CDLAD(2019) 024 կետ 19	
			11. Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է Օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետով նախատեսել ԲԴԽ-ի՝ դատավորների ներքին աշխատանքային կարգապահության կանոնները սահմանելու իրավասություն: Սա, մեղմ ասած, հակասահմանադրական կարգավորում է: ԲԴԽ-ն չի հանդիսանում դատական իշխանության վերադաս, այլ ընդհակառակը, կոչված է երաշխավորելու դատարանների և դատավորների անկախությունը (Սահմանադրության 173-րդ հոդված): Ուստի առաջարկում ենք զերծ մնալ ԲԴԽ-ի համար նման իրավասություն սահմանելու և առհասարակ որևէ մարմնի այդ	Չի ընդունվել Նման տրամաբանությամբ իր առաքելության չեն համապատասխանում նաև այս լիազորությունները որոնք սահմանված են սահմանադրությամբ՝ լուծում է դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու հարցը. լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը. լուծում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը. լուծում	Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ

			<p>լիազորությունը վերապահելու գաղափարից:</p>	<p>է դատավորների լիազորությունների դադարեցման հարցը. հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնում Կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար. օրենքին համապատասխան ձևավորում է իր աշխատակազմը:</p>	
			<p>12. Նախագծի 20-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ խմբագրվում է Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասը: Դրանով մասնավորապես առաջարկվում է դատավորի և ԲԴԽ անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ԲԴԽ որոշմաների ընդունման շեմը 2/3-ից իջեցնել 1/2+1 ձայնի: Այս քայլը, մեր</p>	<p>Չի ընդունվել Շեմը նույնն է մնացել լիազորությունների դադարեցման որոշում կայացնելու դեպքում, իսկ սրա տրամաբանությունն այն է, որ այս դեպքում ԲԴԽ-ն հանդես է գալիս որպես դատարան, իսկ բոլոր կոլեգիալ դատարաններում որոշման կայացման շեմը պարզ</p>	<p>Չի ընդունվել</p>

			<p>համոզմամբ, արդարացված չէ, քանի որ տվյալ նորմը մեկ անգամ ևս ապահովում է դատավորի գործունեության երաշխիքները՝ նրանով, որ նմանաբնույթ որոշումների կայացման համար որակյալ մեծամասնություն է պահանջում, այլ ոչ թե պարզ: Այսինքն, գործի փաստերն այնքան անվիճելի պետք է լինեն, որ որոշմանը կողմ քվեարկի ԲԴԽ անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը: Ըստ այդմ, առաջարկում ենք այդ շեմը թողնել անփոփոխ:</p>	<p>մեծամասնությունն է:</p>	
			<p>13. Նախագծի 22-րդ հոդվածով նախատեսվում է դատավորների տարիքային նվազագույն շեմն իջեցնել մինչև 25 տարեկան, իսկ պարտադիր մասնագիտական ստաժի տարիների քանակը 5-ից իջեցնել 3 տարի: Նման գաղափարն անթույլատրելի է, քանի որ քիչ է անգամ գործող կարգավորմամբ</p>	<p>Չի ընդունվել Դատավորների թեկնածուների տարիքի իջեցումը նախագծով թույլ կտա դատական համակարգ ներգրավել երիտասարդ, կասկածելի կամ վարկաբեկող կապեր չունեցող, համակարգի այլ ներկայացուցիչների հետ կախվածության կամ</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>

			<p>սահմանված 28 տարին լրացած լինելը: Գտնում ենք նաև, որ դատավոր դառնալու համար անհրաժեշտ է մասնագիտական գործունեության հարուստ փորձ՝ ելնելով դատավորի առանձնահատուկ կարգավիճակից ու բարձր պատասխանատվությունից: Նորավարտ երիտասարդները կամ մասնագիտական հարթակում իրենց առաջին քայլերը կատարող մասնագետները պատրաստ չեն նման բարձր պատասխանատվությամբ աշխատանքի թե՛ կենսափորձի, թե՛ մասնագիտական պատրաստվածության բացի պատճառով: Նույն խնդիրն առկա է նաև Նախագծի 27-րդ հոդվածով առաջարկվող՝ դատավորների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու իրավունք ունեցող իրավագիտության բնագավառում</p>	<p>կապվածության մեջ չգտնվող անձանց: Ի լրումն, արհեստավարժությունը ուղղակիորեն կախված չէ տարիքից, այն պայմանավորված է մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմամբ, իրավագիտության բնագավառում ժամանակակից զարգացումների և առաջադեմ միջազգային փորձի յուրացմամբ և այլն: Այդ պատճառով դատավորի նվազագույն տարիքային շեմ ոչ միայն սահմանված չէ միջազգային մասնագիտացված կառույցների կողմից, այլև մի շարք երկրներում նման շեմ ընդհանրապես օրենքով սահմանված չէ:</p>	
--	--	--	---	--	--

			գիտնական աստիճան ունեցող անձի ստաժի նվազեցման մասով: Ուստի առաջարկում ենք լրջորեն վերանայել Նախագծում տեղ գտած այս փոփոխությունները:		
			14. Նախագծի 25-րդ հոդվածով նախատեսվում է Օրենսգրքում ավելացնել նոր 105.1-ին հոդված, որի 5-րդ մասի համաձայն՝ գրավոր քննության արդյունքները դատական կարգով կարող են բողոքարկվել ընթացակարգային խախտումների հիմքով, եթե դրանք բողոքարկվել են Բողոքարկման հանձնաժողովին: Անհասկանալի է, թե ինչու է քննության արդյունքների դատական կարգով բողոքարկման իրավունքն անհարկի սահմանափակման ենթարկվել: Խնդիրն այն է, իրավագիտության մեջ գոյություն ունեն բազմաթիվ ինստիտուտներ հարցեր ու իրավիճակներ, որոնց վերաբերյալ առկա են ոչ միատեսակ	Չի ընդունվել Նյութական հիմքով բողոքարկումը քննությունների ընդունելի չէ, որպիսի պրակտիկա է հիմա տեղի ունենում վարչական դատարանում, երբ դատարանը վերաստուգում է քննության արդյունքները և թվանշան բարձրացնում:	Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ

			<p>մոտեցումներ: Ուստի բողոքարկման հիմք կարող են հանդիսանալ, օրինակ՝ օրենսդրական որևէ նորմի վերաբերյալ մոտեցման կամ մեկնաբանման տարբերությունները: Ըստ այդմ՝ առաջարկում ենք չսահմանափակել գրավոր քննության արդյունքների դատական կարգով բողոքարկման հիմքերը:</p>		
			<p>15. Նախագծի 30-րդ հոդվածով նախատեսվում է Օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել, ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ և 7-րդ մասերից հանել վերջին նախադասությունները: Այդ փոփոխությունների նպատակներն անհասկանալի են, ինչպես նաև հարց է առաջանում, թե ինչու են բացառվում համապատասխան իրավիճակները: Ըստ այդմ, առաջարկում ենք վերանայել այս հոդվածով նախատեսվող</p>	<p>Չի ընդունվել Բաց քվեարկության դեպքում քվեաթերթիկ պետք չէ, ուստի առաջարկվել են այս փոփոխությունները:</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>

			փոփոխությունները:		
			<p>16. Նախագծի 33-րդ հոդվածով նախատեսվում է Օրենսգրքի 123-րդ հոդվածում կատարել փոփոխություններ, որոնց արդյունքում իջեցվում են համապատասխան ցենզերն այն իրավաբան-գիտնականների համար, որոնք ցանկանում են որպես դատավոր աշխատանքի անցնել վերաքննիչ դատարանում: Այս մասով ևս առաջարկում ենք ձեռնպահ մնալ պահանջների մեղմացումից: Նույնը վերաբերում է նաև Նախագծի 35-րդ հոդվածին, որով մեղմացվում են վճարելի դատարանի դատավորի նշանակման չափանիշները:</p>	<p>Չի ընդունվել Մեղմացումներով որևէ կերպ չեն նսեմացվել ընտրվող թեկնածուի համար պահանջվող չափանիշները:</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>
			<p>17. Նախագծի 37-րդ հոդվածով նախատեսվում է Օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասում կատարել փոփոխություն, ըստ որի՝ վճարելի դատարանի պալատի նախագահի համար առնվազն երեք տարի տվյալ</p>	<p>Ընդունվել է</p>	<p>ԸՆԴՈՒՆՎԵ Լ է</p>

			<p>դատարանում աշխատած լինելու պարտադիրության չափանիշը հանվում է: Կարծում ենք, որ վճարել դատարանի պալատի նախագահի համար վճարել դատարանում գործունեության ժամկետի որոշակի ցենզ այնուամենայնիվ անհրաժեշտ է սահմանել: Սույն կետում շարադրվածը վերաբերելի է նաև Նախագծի 38-րդ հոդվածի 1-ին կետին, որով առաջարկվում է վճարել դատարանի նախագահի թեկնածուին ներկայացվող պահանջների շարքից հանել վճարել դատարանում առնվազն երեք տարվա դատավորի փորձառությունը:</p>		
			<p>18. Նախագծի 39-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունների համաձայն՝ Օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասից (բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի,</p>	<p>Ընդունվել է</p>	<p>ԸՆԴՈՒՆՎԵ Լ Է</p>

			<p>դատավորների գործունեության գնահատման արդյունքները և այդ կապակցությամբ ձեռք բերված տվյալներն ու տեղեկությունները գաղտնի են և չեն կարող օգտագործվել այլ նպատակներով) հանվում են «չեն կարող օգտագործվել այլ նպատակներով» բառերը, ինչը որևէ կերպ արդարացված չէ: Ըստ այդմ, առաջարկում ենք վերականգնել նախկին խմբագրությունը:</p>		
			<p>19. Նախագծի 46-րդ հոդվածով Օրենսգրքի 150-րդ հոդվածում նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ նշենք, որ զուգահեռ վարույթների դեպքում, (տվյալ դեպքում՝ քրեական և կարգապահական վարույթներ) եթե շարունակվում է դրանցից որևէ մեկը, ապա մյուսը ենթակա է կարճման, այլ ոչ թե կասեցման, ընդ որում՝ պետք է շարունակվի քրեական գործի քննությունը: Դա</p>	<p>Չի ընդունվել Քրեական վարույթը չի բացառում կարգապահական վարույթը, իսկ կասեցման նպատակը հետևյալն է՝ եթե անձը դատապարտվի ապա նրա լիազորությունները կդադարեցվեն և վարույթը կկարճվի, եթե չդատապարտվի, ապա վարույթը կվերսկսվի:</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>

			<p>մի կողմից նպատակ ունի բացառել միևնույն արարքի համար կրկնակի պատասխանատվության ենթարկվելը, մյուս կողմից անձի կողմից նույն արարքի (այդ թվում՝ արարքի բացակայության) հարցը քննվում է մի դեպքում բարձր, մյուս դեպքում՝ ավելի ցածր ապացուցողական չափանիշներ ունեցող վարույթներում: Ուստի առաջարկում ենք քննարկվող հոդվածի 3-րդ մասում «կասեցնել» բառը փոխարինել «կարճել» բառով:</p>		
			<p>20. Նախագծի 47-րդ հոդվածով նախատեսվում է Օրենսգրքի 151-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ: Այստեղ առաջարկում ենք ներառել Սահմանադրության 65-րդ հոդվածի բովանդակությունը, ըստ որի՝ ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն</p>	<p>Չի ընդունվել Դատավորի համար առկա է ցուցմունք չտալու իրավունք, ևայլ անձ չկա ներգրավված, որի դեպքում կարող է նման դեպք առկա լինել:</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>

			<p>հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ (Օրենսգրքում «ոչ ոք» բառերը փոխարինելով «վկան» բառով):</p>		
			<p>21. Նախագծի 49-րդ հոդվածով նախատեսվում է Օրենսգիրքը լրացնել նոր 156.1-ին հոդվածով: Այդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հետևյալը․ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ համապատասխանաբար դատավորի կամ կարգապահական վարույթ հարուցած մարմնի բողոքը քննում է Բարձրագույն դատական խորհուրդը, եթե ի հայտ է եկել այնպիսի էական ապացույց կամ հանգամանք, որը բողոքարկողը նախկինում չի ներկայացրել իր</p>	<p>Չի ընդունվել Այլ դեպքերում բողոքարկում նախատեսելը, որը քննվում է միևնույն մարմնի՝ ԲԴԽ կողմից արդյունավետ չի լինի: ԲԴԽ որոշումը ենթակա չէ դատական կարգով բողոքարկման ինչի կապակցությամբ դիրքորոշում է արտահայտել նաև Սահմանադրական դատարանը:</p>	<p>Չի ըՆԴՈՒՆՎԵԼ</p>

			<p>կամքից անկախ հանգամանքներով և որը ողջամտորեն կարող էր ազդել որոշման վրա: Ստացվում է, որ նշված որոշման բողոքարկումը հնարավոր է միայն սահմանված կոնկրետ դեպքում: Կարծում ենք, որ նշված կարգավորումն անարդարացի է, և հնարավոր են բազմաթիվ իրավիճակներ, երբ անձն ունենա որոշումը բողոքարկելու և բողոքարկման արդյունքում այդ որոշման վերացման օրինական ակնկալիք, սակայն բողոքարկմանը խոչընդոտի այդ էական ապացույցի կամ հանգամանքի բացակայությունը: Ուստի առաջարկում ենք չսահմանափակել բողոքարկման հնարավորությունը կամ գոնե սահմանել ողջամիտ սահմանափակումներ: Ավելին, «էական»-ն այստեղ որևէ կերպ չի սահմանվում, հետևաբար այս սահմանումը տալիս է լայն</p>	
--	--	--	---	--

			<p>հայեցողության հնարավորություն: Առաջարկում ենք նույն հոդվածի 4-րդ մասում «կողմերը ծանուցվում են» բառերը փոխարինել «կողմերը պատշաճ կարգով ծանուցվում են» բառերով: Ինչ վերաբերում է քննարկվող հոդվածի 7-րդ մասին, ապա դրա համաձայն՝ բողոքի քննության արդյունքներով Բարձրագույն դատական խորհուրդը կայացնում է բողոքարկվող որոշումն անփոփոխ թողնելու կամ որոշումը մասնակի կամ ամբողջությամբ վերացնելու մասին որոշում: Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է: Առաջարկում ենք հստակեցնել՝ ԲԴԽ որոշումը ենթակա՞ է արդյոք դատական կարգով բողոքարկման, թե՞ ոչ:</p>		
		<p>«Սահմանդրական դատարանի մասին» Հայաստանի</p>	<p>1. «Սահմանդրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում</p>	<p>Չեն ընդունվել՝ Դատական օրենսգրքի կապակցությամբ վերը նշված հիմնավորումներով:</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>

		<p>Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծ</p>	<p>փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծով նախատեսվում է վերոնշյալ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասում կատարել լրացում, ըստ որի՝ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդման դեպքում այդ քրեական գործով մինչդատական վարույթի նկատմամբ հսկողության իրավունք կունենա նաև գլխավոր դատախազի տեղակալը: Այստեղ ևս նշենք, որ այդ դրույթի նախատեսումը, մեր համոզմամբ, իրավաչափ չէ, քանի որ միայն գլխավոր դատախազին նման իրավասություն վերապահելը պայմանավորված է դատավորի կարգավիճակի առանձնահատկությամբ և դատավորի անձեռնմխելիության լրացուցիչ երաշխիքի սահմանման անհրաժեշտությամբ: Ուստի</p>		
--	--	---	--	--	--

			<p>առաջարկում ենք հրաժարվել նման կարգավորման նախատեսումից:</p> <p>2. Նույն հոդվածի 10-րդ մասում նախատեսվում է կատարել լրացում, որի արդյունքում՝ Սահմանադրական դատարանի դատավորը, ով քրեական հետապնդման չի ենթարկվում, հնարավորություն չի ունենա նախապես տեղեկանալու իր մասնակցությամբ քննչական գործողությունների անցկացման մասին: Նախատեսվող լրացման անհրաժեշտությունն ընդհանրապես անհասկանալի է՝ հաշվի առնելով, որ եթե Սահմանադրական դատարանի դատավորը քրեական հետապնդման չի ենթարկվում, ապա չկա նախաքննության շահերի ապահովման կամ գաղտնիության պահպանման անհրաժեշտություն: Առաջարկում ենք գործող կարգավորումը թողնել անփոփոխ:</p> <p>3. Առաջարկում ենք անփոփոխ թողնել նաև սահմանադրական</p>		
--	--	--	--	--	--

			<p>օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, քանի որ գործող իրավակարգավորումն սպառիչ է:</p> <p>4. Նախագծի 15-րդ հոդվածով նախատեսվող փոփոխության անթույլատրելիության մասին արդեն նշվել է սույն փաստաթղթում: Այն ևս առաջարկում ենք հանել փաթեթից:</p> <p>5. Նախագծով նախատեսվում է սահմանադրական օրենքը լրացնել նոր 84.1-ին հոդվածով, որի 1-ին մասով սահմանվում է որ զուգաեռ վարույթների առկայության դեպքում կարգապահական վարույթը կասեցվում է: Սրա վերաբերյալ վերևում ևս նշել ենք, որ մի վարույթի շարունակումը պետք է հանգեցնի մյուսի կարճմանը, այլ ոչ թե կասեցմանը:</p>		
		<p>«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության</p>	<p>1. Առաջարկում ենք փաթեթից հանել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու</p>	<p>Չի ընդունվել Տուրքի նպատակը որոշակի առումով փոխհատուցել մատուցված</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵ Լ</p>

	<p>օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ</p>	<p>մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը՝ նոր տուրքեր չսահմանելով նրա համար, ինչը մինչ այժմ արդարացիորեն եղել է անվճար և չբարձրացնելով գործող մյուս տուրքը:</p>	<p>ծառայության դիմաց և կանխել հնարավոր ոչ նպատակային դիմումները:</p>	
--	--	--	--	--

	<p>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ</p>	<p>1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 8-րդ հոդվածով նախատեսվում է նշյալ օրենքի 25- րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ և ավելացնել նոր 2.1-ին մաս, որով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տրվում են նոր իրավասություններ: Մասնավորապես, պահանջել և ստանալ բանկային և այլ գաղտնիք պարունակող տեղեկություններ թե՛</p>	<p>Չի ընդունվել Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պետությունների խումբը (ԳՐԵԿՈ) գնահատման չորրորդ փուլի «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» 2015 թվականի զեկույցում անդրադառնալով կոռուպցիայի կանխարգելման</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ</p>
--	--	--	---	-------------------------

			<p>Հանրապետությունում գործող, թե՛ օտարերկրյա բանկերից: Քրեադատավարակն օրենսդրության համաձայն՝ բանկային գաղտնիք կազմող տվյալներ կարելի ստանալ բացառապես դատարանի որոշման հիման վրա: Դեռ ավելին՝ այդ անձինք պետք է գործով ներգրավված լինեն որպես կասկածյալ կամ մեղադրյալ, իսկ նրանց առնչվող իրավաբանական անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք համարվող տեղեկությունները կարելի ստանալ միայն այն պարագայում, երբ տվյալ իրավաբանական անձի գործունեությունը ղեկավարվել, կառավարվել կամ այլ կերպ ուղղորդվել է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից: Ուստի առաջարկում ենք վերանայել այդ կարգավորումները: Առաջարկում ենք բանկային և հարակից ոլորտների գաղտնիքի</p>	<p>ընդհանուր դրույթներին և, այդ համատեքստում, հայտարարագրման համակարգի արդյունավետությանը՝ չափազանց կարևորել է հայտարարագրերի խորքային վերլուծության և դրանց նկատմամբ հսկողություն իրականացնելու գործընթացում Հանձնաժողովին հստակ մանդատ և պատշաճ գործիքակազմ տրամադրելու անհրաժեշտությունը: Այս առումով, Գրեկոն ընդգծել է, որ, ի թիվս այլ հարցերի, անհրաժեշտ է ապահովել, որ Հանձնաժողովը հասանելիություն ունենա բոլոր պետական տվյալների</p>	
--	--	--	--	--	--

			<p>պահպանման ինստիտուտը թողնել անփոփոխ: Նույնը վերաբերում է նաև փաթեթում ընդգրկված այլ նախագծերի համապատասխան կարգավորումներին:</p>	<p>շտեմարաններին: Միաժամանակ, Հանձնաժողովն առաջարկել է դիտարկել Հանձնաժողովին բանկերից և այլ ֆինանսական հաստատություններից համապատասխան ֆինանսական տեղեկատվություն պահանջելու իրավասության տրամադրման հարցը: (ԳՐԵԿՈ 4-րդ փուլի զեկույց, 2015 թ., կետ 231)</p> <p>2019 թվականի զեկույցում ԳՐԵԿՈ-ն ընդգծել է, որ հայտարարագրերի ստուգման նպատակով ԿԿՀ-ին անհրաժեշտ է լիազորություն տրամադրել ստանալու</p>	
--	--	--	---	---	--

				<p>հասանելիություն անհրաժեշտ ֆինանսական տվյալներին՝ անձնական տվյալների պաշտպանության և համաչափության երաշխավորմամբ: Այսպես, բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն կարող է տրամադրվել, եթե սահմանված է օրենքով (ԳՐԵԿՈ 4-րդ փուլի 2-րդ համապատասխանության զեկույց, 2019թ, կետ 85)</p> <p>Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների՝ կոռուպցիայի կանխարգելման մարմիններին հասանելիության մոդելը գործում է տարբեր</p>	
--	--	--	--	--	--

				<p>երկրներում: Մասնավորապես, Բուլղարիայում հայտարարագրերի և գույքի կարգավիճակի ստուգման համար Հակակոռուպցիոն հանձնաժողովը կարող է պահանջել և ստանալ վարկային տեղեկատվություն և բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ: Բուլղարիայի Ազգային բանկը ստեղծում և պահպանում է հաճախորդների դրամական պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվական համակարգ, որը հասանելի է inter alia Կոռուպցիայի դեմ</p>	
--	--	--	--	--	--

				<p>պայքարի և ապօրինի ձեռք բերված ակտիվների բռնագանձման հանձնաժողովին՝ որոշ բացառություններով:</p> <p>Էստոնիայում բանկերը և վարկային կազմակերպությունները ի պատասխան գրավոր հարցման Տնտեսական շահերի հայտարարագրման դեպոզիտարիային պետք է տրամադրեն Կոռուպցիայի դեմ պայքարի օրենքում նշված անձի մասին բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկություն՝ տնտեսական շահերի հայտարարագրում նշված տեղեկությունները ճշտելու համար, եթե առկա է կոռուպցիայի կասկած:</p>	
--	--	--	--	---	--

				<p>Նման կարգավորումներ են նախատեսված նաև Իսպանիայում և Պորտուգալիայում, երբ կասկածներ կան պաշտոնատար անձանց կոռուպցիայի մասին:</p> <p>Միաժամանակ, կարևոր երաշխիք է ԿԲ և ԿԿՀ համատեղ ակտով բանկային գաղտնիք կազմող տվյալների փոխանցման կարգի սահմանումը:</p> <p>Այդուհանդերձ, բանկային գաղտնիքին առնչվող դրույթները նախագծում հստակեցվել են:</p>	
--	--	--	--	---	--

		<p>«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ</p>	<p>1. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածում հանրային ծառայողների՝ առհասարակ որևէ տեսակի նվեր ստանալու արգելքի սահմանումը, ինչպես նշվել է վերևում, խիստ խնդրահարույց ու վիճելի է՝ թե նման արգելքի սահմանման, թե՛ այդ նորմի կիրառության տեսանկյուններից: Այստեղ առաջարկում ենք թողնել գործող իրավակարգավորումները</p>	<p>Չի ընդունվել «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է, որ «նվեր» հասկացությունը ենթադրում է ցանկացած գույքային առավելություն, որը ողջամտորեն չէր տրամադրվի պաշտոն չգրադեցնող անձի: Այն ընդգրկում է նաև ներված պահանջը, անհատույց կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով պահանջի զիջումը, անհատույց հանձնված գույքը կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով վաճառված գույքը, անհատույց կամ անհամարժեք ցածր գնով մատուցված ծառայությունը կամ կատարված աշխատանքը, ինչպես նաև արտոնյալ փոխառությունը, ուրիշի</p>	<p>Չի ԸՆԴՈՒՆՎԵԼ</p>
--	--	--	--	--	--------------------------

				<p>գույքի անհատույց օգտագործումը կամ այլ գործողություններ, որոնց հետևանքով անձն ստանում է օգուտ կամ առավելություն:</p> <p>Վերոնշյալից հետևում է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքն արդեն իսկ պայմանավորում է նվեր հասկացությունը և այն ստանալու կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տալու արգելքն անձի՝ պաշտոն զբաղեցնելու հանգամանքի հետ և այս պարագայում խոսք չի կարող գնալ արգելքի բացարձակ բնույթի մասին</p>	
			<p>2. Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող կարգավորումներով՝ հայտարարատու պաշտոնատար անձանց հետ համատեղ չբնակվող չափահաս ընտանիքի անդամները</p>	<p>Ընդունվել է</p>	<p>ԸՆԴՈՒՆՎԵԼ է</p>

			<p>ևս համարվում են հայտարարատու պաշտոնատար անձ: Ավելին, բացարձակապես անհասկանալի ու անհիմն է պաշտոնատար անձանց հետ համատեղ չբնակվող ծնողներին, քույրերին և եղբայրներին ևս հայտարարատու դարձնելը: Առաջարկում ենք այս իրավակարգավորումները հանել նախագծերի փաթեթից և թողնել դրանք այժմ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում գործող տեսքով:</p>		
		<p>«Բանկային գաղտնիքի մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության</p>	<p>1. Փաթեթում ներառված՝ «Բանկային գաղտնիքի մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններն ու լրացումները բացարձակապես անընդունելի են՝ հաշվի առնելով հատկապես այն հանգամանքը, որ</p>	<p>Ընդունվելի է մասնակի Հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակը տվյալ նախագծով չի փոփոխվում, ընտանիքի կազմն ընդլայնող կարգավորումները հանվել են նախագծից: Այդուհանդերձ, բանկային գաղտնիքի վերաբերյալ դիրքորոշումն արդեն իսկ</p>	<p>ՄԱՍՆԱԿԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ</p>

		<p>օրենքներում փոփոխություններն ու լրացումներ</p>	<p>հայտարարատու պաշտոնատար անձնաց շրջանակը փաթեթի գործող տեսքով ընդունմամբ բազմապատկվում է՝ ներառելով պաշտոնատար անձանց ընտանիքների բազմաթիվ անդամների: Եվ, ինչպես արդեն նշվել է, անթույլատրելի է խնդրո առարկա գաղտնիքի բացահայտումն առանց դատարանի որոշման՝ այն էլ համապատասխան վարույթի շրջանակերում: Առաջարկում ենք հրաժարվել ֆինանսաբանկային համակարգի կարևորագույն տարրերից մեկը՝ գաղտնիության երաշխիքը ոտնահարելուց:</p>	<p>ներկայացված է վերոնշյալ կետերում:</p>	
		<p>Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին</p>	<p>1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետն առաջարկում ենք հանել,</p>	<p>Ընդունվել է</p>	<p>ԸՆԴՈՒՆՎԵԼ Է</p>

		Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ	քանի որ համապատասխան փոփոխությունն արդեն կատարված է գործող օրենսգրքում:		
ԱԺ պատգամավոր Սուրեն Գրիգորյան	ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին սահմանդրական օրենքի նախագիծ, հոդված 26	1. Առաջարկվում է հանել «, իսկ միայն ռուսերեն լեզվի իմացության դեպքում՝ թվարկված այլ լեզուներից որևէ մեկի իմացություն» բառերը:	Ընդունվել է	ԸՆԴՈՒՆՎԵԼ է	
	ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին սահմանդրական օրենքի նախագիծ, հոդված 24	2. Առաջարկվում է հոդված 24-ով փոփոխել միայն օրենքի 95-րդ հոդվածի 4-րդ մասը, 113-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը, 116-րդ հոդվածի 4-6-րդ մասերը, 128-րդ հոդվածի 4-րդ մասը	Ընդունվել է	ԸՆԴՈՒՆՎԵԼ է	
	ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին	16-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ծագած հիմքերով (խախտումներով)	Ընդունվել է	ԸՆԴՈՒՆՎԵԼ է	

		սահմանդրական օրենքի նախագիծ, հոդված 58	հարուցվող կարգապահական վարույթների հարուցման նկատմամբ կիրառվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ օրենսգրքի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և 144-րդ հոդվածով նախատեսված ժամկետները:»:		
--	--	--	---	--	--